


Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՋԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

21 հունիսի

Արգենտինայի եւ Կանադայի հայոց թեմերի երիտասարդ ուխտավորների




Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքի Հայկական բարե-

գործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանի ավարտական սաներին՝ ուղեկցությամբ Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու

հոգեւոր հովիվ Մաղաքիա արեղա Ամիրյանի եւ Կանադայի Տորոնտո քաղաքի Ս. Երրորդություն եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» դպրոցի աշակերտներին՝ առաջնորդությամբ Տորոնտոյի Ս. Վարդան եկեղեցու հոգեւոր հովիվ Գեղարդ ավագ քահանա Կարապետյանի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով երիտասարդ հայորդիների այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, կարեւորեց այդպիսի ուխտագնացությունների դերը նրանց կյանքում՝ նշելով, որ դրանք հնարավորություն են ընձեռում ավելի խորությամբ ճանաչելու իրենց հայրենիքը, պատմությունն ու մշակույթը, նպաստում Սփյուռքում հայկական ոգու պահպանմանն ու զորացմանը, եկեղեցու եւ հայրենիքի հանդեպ սիրո ամրապնդմանը:



Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց երկու դպրոցների վարչության անդամներին, հոգաբարձուներին ու մանկավարժներին, ովքեր հայ երիտասարդներին կրթում ու դաստիարակում են ազգային արժեքներով եւ հայրենի սուրբ հավատքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ աշակերտների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ եկեղեցու պատմությանը, միջեկեղեցական հարաբերություններին, հասարակական կյանքում եկեղեցու դերին:

26 հունիսի

ՌԴ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանի:

Ողջունելով Ռուսաստանի տրանսպորտի նախարարի այցը Մայր Աթոռ Սբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ երկու երկրների գործակցային ջերմ հարաբերություններին: Նորին Սրբությունը կարեւորեց երկու ժողովուրդներ-

ի՝ քրտինքով եւ արյամբ նվիրագործված բարեկամական հարաբերությունների նախանձախնդիր պահպանումն ու զարգացումը, նշեց, որ հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության կերտման ակունքներում քրիստոնեական հավատն է եղել, ու այսօր էլ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիներն առանձնակի ջանքեր են ներդնում երկու երկրների հարաբերությունների ամրապնդման համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ սեպտեմբերին կայանալիք Մոսկվայի

Նորակառույց առաջնորդանիստ հայկական եկեղեցու օծման արարողությանը, որը նշանակալի կարեւորություն պիտի ունենա մասնավորապես Ռուսաստանի հայ համայնքի համար:

Իսկ Մաքսիմ Սոկոլովը շնորհակալություն հայտնեց համաքրիստոնեական նշանակություն ունեցող հայոց հոգեւոր կենտրոնում ջերմ ընդունելության համար՝ ուրախությամբ արձանագրելով, որ երկու երկրների հարաբերությունները հատկանշվում են ոչ միայն սերտ գործակցային, այլեւ բարեկամական ոգով:



Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավասարմասարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում ՍԱՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Իսսամ Նայալին:

Նորին Սրբությունը մտահոգությամբ անդրադարձավ Սիրիայում տիրող իրավիճակին՝ խորին ցավ հայտնելով հակամարտության հետեւանքով Սիրիայի ժողովրդի կրած կորուստների եւ պատճառված ավերածությունների համար: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայոց եկեղեցին շարունակելու է իր գորակ-


ցությունը բերել ծանր կացության մեջ գտնվող Սիրիայի ժողովրդին, վստահություն հայտնեց, որ Աստծու օգնականությամբ Սիրիայում խաղաղություն ու համերաշխություն կհաստատվի, եւ Սիրիայի աստվածասեր ժողովուրդը կվերագտնի իր բնականոն կյանքի ընթացքը: Իր հերթին Իսսամ Նայալը Սիրիայի ժողովրդի անունից երախտագիտություն հայտնեց հայ ժողովրդին եւ Հայոց եկեղեցուն՝ ցուցաբերած մարդասիրական օգնության համար: Նա Նորին Սրբու-

թյանը փոխանցեց նաեւ Սիրիայի գլխավոր մոլֆթի շեյխ Ահմադ Բադր ադ-Դին Հասանի ողջույնները:

Վեհափառ Հայրապետը, վերստին կարեւորելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների ամրապնդումը, Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին արդյունավոր առաքելություն մաղթեց Հայաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐ ԷԶՍԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայ ժողովրդի տատկերունը օտարագգի ճանադարհորդների եւ ճիսիոներների գրվածքներում



Սկիզբը՝ թիվ 12-13

Հարկ է նշել, որ Մաքս ֆոն Թելմանի վերաբերմունքը հայերի հանդեպ երկակի է։ Այլ խոսքով՝ օտարերկրացի հայերի մեջ տեսնում է թե՛ լավ եւ թե՛ վատ կողմեր։ Բայց ընդհանուր առմամբ Մաքս ֆոն Թելմանի պահվածքի ու վերաբերմունքի մեջ զգացվում է որոշակի մեծապետական գոռոզություն։ «Հայերը, որոնց թիվը տատանվում է 600 000-ի սահմաններում, ցրված են երկրի տարբեր շրջաններում։ Նրանց կարելի է հանդիպել ամենուր։ Հայ գյուղացին քաղաքային բնակիչներից տարբերվում է ավելի շատ, քան թաթար գյուղացին քաղաքացուց։ Հայ գյուղացիները կողք կողքի ապրում են թաթարների հետ եւ իրենց արտաքինով գրեթե չեն տարբերվում նրանցից։ Ինչ վերա-

բերում է այդ երկուսի բարբերին, ապա այստեղ իհարկե տարբերություն կա, բայց ոչ այնքան զգալի։ Ինչ վերաբերում է քաղաքաբնակ հայերին, ապա նրանք ընդհանրապես նման չեն գյուղաբնակ հայերին։ Նրանց զգալի մասը վաճառականներ են։ Թուրքիայում գրեթե գոյություն չունի որեւէ գյուղ, որտեղ չլինի մեկ-երկու հայ, որոնք կատարում են նույն դերը, ինչ հրեաները Արեւելյան Գերմանիայում ու Լեհաստանում։ Հայերը ճարպիկ են, ճկուն, նպատակասլաց ու համառ, բայց բնավ ոչ բարեխիղճ։ Նրանք իրենց ձեռքն են վերցնում գործարար կյանքը եւ արագ հարստանում՝ դառնալով երկրի փաստացի տերը» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 120)։

Մաքս ֆոն Թելմանը, գիտակցելով, որ իր դատողությունները

չափազանցված են, փորձում է շտկել իր սխալը՝ ասելով. «Թեեւ այս ժողովուրդը դարեր շարունակ մի շարք նվաճողների հպատակն է եղել, թեեւ շատ հայեր սփռված են երկրագնդով մեկ, ու թեեւ հայերի մեծ մասն ապրում է թուրքական գերիշխանության ներքո, սակայն այս ազգը երբեք չի ուրացել քրիստոնեական հավատը, որը նրան է փոխանցվել մեր թվարկության առաջին դարերից» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 121)։ Գերմանացի դիվանագետի վերջին պնդումները միանգամայն ճշմարտացի են, սակայն առավել ուշագրավ են նրա խոսքերը հայերի քրիստոնեապաշտության վերաբերյալ։ Վստահաբար կարելի է ասել, որ բնավ ոչ բոլոր ազգերին է տրված այդքան սկզբունքայնություն եւ նման մեծ հավատարմություն հարազատ հավատի հանդեպ։ Խոստովանենք, որ բնավ հեշտ չէ սեփական կյանքը վտանգել հանուն դավանանքի, սակայն հայ ազգը, որն օտարազգիների հավաստմամբ՝ առնվազն վերջին մի քանի հարյուրամյակներում առանձնապես աչքի չի ընկել քաջությամբ, շատ հաճախ գերադասում էր նահատակվել, բայց չդառնալ իսլամադավան։ Ինչպես տեսանք վերն ասվածից, հայ ազգի սկզբունքային կարգադիր չի վրիպել օտարների ուշադրությունից եւ մեծ հիացմունք է առաջացրել։ Սակայն հա-

յերի քրիստոնեապաշտությունը բնավ միակ հատկանիշը չէ, որը բարձր է գնահատվել օտարազգիների կողմից։ Նույն Մաքս ֆոն Թելմանը գրում է իր գրքում, թե ինչպես է ինքը մի անգամ ճանապարհորդել դեպի եկեղեցիների մեռյալ քաղաքը՝ Անի։ Նրան ուղեկցում էր երեք ոստիկան՝ թուրք ավագակախմբերից նրան պաշտպանելու համար։ Ոստիկաններից մեկը, ի դեպ, հայ էր, որի մասին գերմանացին ասում է հետեւյալը. «Ինձ ուղեկցող ոստիկանն ազգությամբ հայ էր։ Նա փայլուն խոսում էր թե՛ ռուսերեն եւ թե՛ թուրքերեն։ Նա նաեւ հրաշալի ծիպվոր էր եւ ամենաճարպիկ մարդն էր, ում ես հանդիպել էի այդ ուղեւորության ընթացքում» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 121)։

Այնուհետեւ գերմանացի սպան հասնում է Էջմիածին, որտեղ հանդիպում է մի հայազգի վարդապետի։ Մաքս ֆոն Թելմանը հետեւյալ կերպ է նկարագրում հայ հոգեւորականին. «Վարդապետն իսկական գիտնական էր։ Նա մի քանի տարի շարունակ արդի գիտություններին նվիրված համառոտ ժողովածուներ էր գրում, որոնք նախատեսված էին Հայաստանի ազգային դպրոցի համար։ Վարդապետը խստորեն քննադատում էր դպրոցական կրթության բարձրագույն վիճակը, ինչի հետեւանքով հայկական ազգաբնակչու-

թյունը չէր կարողանում զարգացում ապրել, թեեւ դրա համար բնատուր նախադրյալներ ուներ։ Վարդապետը բարձր է գնահատում Վենետիկի Մխիթարյան միաբանների բեղմնավոր եւ դրվատելի աշխատանքը գիտության բնագավառում, թեեւ մեղադրում էր նրանց հռոմի Պապի կողմնակիցը լինելու մեջ։ ...Վանքի կանոններն այնքան էլ խիստ չեն, եւ չհաշված կենցաղի համեստությունը՝ ամեն ոք այստեղ կարող է ապրել իր ուզած ձևով։ Հայ վանականի զգեստն ամենավեհաշուք զգեստն է, որ եւ երբեւէ տեսել եմ» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 121)։ Ահա այսպես է Մաքս ֆոն Թելմանը բնութագրում հայոց վանական կյանքը։

Հայերի մարդասիրական էության մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնել 1895 թ. Թուրքիայում որպես Մեծ Բրիտանիայի հյուպատոս ծառայած Ս. Մ. Հովվորդի՝ իր մորն ուղարկած նամակներում։ Վերջիններս հրատարակվել են մեկ ժողովածուով, որը վերնագրված է «Ս. Մ. Հովվորդի նամակները» (Hallward C. M., The Letters of C. M. Hallward. Privately published, London, 1895)։ Հովվորդի գրած նամակներից ընթերցողը տեղեկանում է այն մասին, որ մի անգամ նա եւ իր հայ թարգմանիչը՝ Նշան Էֆենդին, ուղեւորվեցին դեպի Վան։ Ճանապարհին Հովվորդն ու թարգմանիչը մեկ գիշեր անցկացրին Իրդիշում։ Այստեղ նրանց թույլ տվեցին վրան խփել մի սրճարանի այգում։ Սրճարանի տերը, ի դեպ, նույնպես հայ էր։

Շարունակությունը՝ էջ 4

ՍԱՐՈՒԽԱՆ ՀԻԶՆԱՑԻ † ՌՁ = 4 փետրվարի 1631, Ուր.

Քրիստոսի երանելի վկա Սարուխանն ազգությամբ հայ էր՝ հիզան քաղաքից՝ մանկությունից սկսած եւ դաստիարակված քրիստոնեական վարքով ու հավատով, աստվածապաշտ էր՝ ուղիղ վարքով եւ անբասիր գործով, քրիստոսասեր եւ երկյուղած, լուսավորչական դավանությամբ կրթված, աներեր սիրով եւ հաստատուն հավատով։ Ուներ նաեւ երաժշտական կրթություն, նվագում էր քնար եւ տավիղ, նաեւ կոշկակար էր։ Եվ հիզանից գաղթելով՝ իր կնոջ եւ որդիների հետ եկել է բնակությունը իր հաստատել բոլեշխի մայրաքաղաքում՝ Բաղեշում։ Որոշ ժամանակ անց կինը մահացավ, եւ Սարուխանը դարձավ ամուրի՝ մորից որբացած իր երկու որդիներով։

Նա հանդիպեց մի օտար եւ քուրդ կնոջ եւ հարցրեց նրան. «Ո՞վ ես դու կամ որտեղից»։

Նա ասաց. «Քրիստոնեական հավատով այրի կին եմ»։ Զահաններից եւ դրացիներից չիմանալով, որ կինն այլազգի է, ամուսնացրին Սարուխանի հետ եկեղեցում՝ խաչով, Ավետարանով եւ սուրբ օրենքներով՝ ընդունելով կնոջը որպես քրիստոնյա՝ չիմանալով ով լինելը։

Երեք տարի կնոջ հետ ապրելուց հետո Սարուխանը հարցրեց նրան եւ իմացավ, որ ազգությամբ քուրդ է եւ լառաշնորդվել է Մուհամեդի օրենքներով։ Նրանից հարցրեց Քրիստոսի հետեւորդ դառնալու պատճառը, իսկ նա պատասխանեց. «Ձեր ազգից մեկին մեր երկրում առանց պատճառի սպանեցին իմ ազգակիցները, եւ ես գիշերը տեսա, թե ինչպես Աստծու լույսը ծառի նման ծագեց նրա վրա։ Տեսնելով այդ մարդուն՝ ցանկացա ընդունել

ձեր կրոնն ու օրենքները։ Այդ իսկ պատճառով փախա եւ եկա այս երկիր, որպեսզի հայտնապես պաշտեմ Քրիստոս Աստծուն»։ Հաճախակի գնում էր եկեղեցի, ապաշխարելով՝ մասնակցում էր սուրբ Հաղորդությանը. նա ծնեց երկու զավակ եւ նրանց մկրտեց քրիստոնեական հավատով եւ տղաների մահանալուց հետո նրանց թաղեց քրիստոնեական օրենքների համաձայն։

Իսկ Սարուխանն անօրենների նկատմամբ տաճած վախից չկարողացավ հայտնել զաղտիքը, ապա իր մտքում իիշելով՝ մաշվում էր Աստծու երկյուրից։ Մշտապես քրիստոնյաների շրջանակում կրկնում էր. «Ես պիտի մեռնեմ հանուն Քրիստոսի սիրո եւ Նրա անվան համար պիտի այրվեմ հրով»։ Երեք տարի անց՝ օրերից մի օր՝ ձմռանը, Սարուխանը նստել էր դրսում՝ արեւի տակ, եւ նվագում էր իր քաղցրեղու տավիղը։

Շատ քրիստոնյաներ հավաքվելով՝ լսում էին երաժշտության ձայնը եւ անսահման ուրախանում։ Այդ ժամանակ, ազդվելով Սուրբ Հոգուց, ասաց. «Ո՞վ եղբայրներ, շուտով ես հրով պիտի այրվեմ»։

Նույնը օրը [կնոջ քուրդ ամուսինը] որոնելով՝ գտավ կնոջը եւ հավաքվածների ներկայությամբ աղաղակեց. «Եկե՛ք, տեսե՛ք քրիստոնյաների կատարած գործը, որ խաբել են իմ կնոջը եւ բռնությամբ դարձրել քրիստոնյա»։

Գնալով Ավդալ խանի եւ նրա եղբայր Մահմադ բեկի մոտ՝ հայտնեցին. «Ոմն քրիստոնյա Սարուխան, առեւանգելով տաճիկի կնոջը, դարձրել է քրիստոնյա. սա մեր օրենքների աղավաղումն է ու մեր առաջնորդի»։

Նրանք անմիջապես իրենց

մոտ կանչեցին նրան [Սարուխանին] եւ հարցաքննելով տեսան Քրիստոսի հանդեպ նրա անսասան հավատը՝ Նրա երկյուրով եւ սիրով լցված։ Նրան տարան դատավորի մոտ։

Դատավորն ասաց. «Ո՞վ դու մարդ, ուրացի՞ր Քրիստոսին եւ ընդունի՞ր մեր օրենքը, իսկ մենք քեզ կներենք քո վնասը, որ գործել ես մեր ազգի եւ հավատի նկատմամբ. եթե ոչ՝ մեր ձեռքով չարաչար կմեռես»։

Սուրբ Սարուխանն ասաց. «Ես քրիստոնյա եմ եւ Քրիստոսի ծառա, ձեր հավատը չեմ ընդունում եւ սուրբ հավատս եմ ուրանում. երկու-երեք տարվա ունայն կյանքի համար՝ հավիտենական կյանքը չեմ կորցնի»։

Դատավորը նրան ասաց. «Ուրացի՞ր Քրիստոսին, ա՛ռ քո կնոջը եւ ազատվի՛ր տանջանքներից»։

Սուրբ Սարուխանն ասաց. «Ինչպե՞ս կարող եմ թողնել իմ հոգին լուսավորող Քրիստոս Աստծուն, Նրա օրենքի լույսը եւ ընդունել ձեռ տուն ու մոլորեցնող օրենքները»։

Դատավորը նրան այրելու վճիռ արձակեց։ Նրան տարան Մահմադ բեկի մոտ։ Վերջինս շատ ջանք գործադրեց՝ աղաչելով, ինքնվածքներ ու պարգևներ խոստանալով, սակայն չկարողացավ մոլորեցնել նրան, քանի որ նրա սիրտը, իբրեւ աղամանդյա վեմ, հաստատված էր Քրիստոսի սիրով։ Ապա տարան զգեցին ժանտահոտ ու խոնավ բանտը, որպեսզի սարսափի եւ զոջալով՝ ուրանա Քրիստոսին։ Սակայն չկարողացան հաղթել սրբին։ Կրկին նրան բերեցին ատյան եւ ահաբեկում էին՝ սպառնալով մահվան դատապարտել, այրել կամ կոտանքների ենթարկելով՝ սպանել։



Դարձյալ չկարողացան հեռացնել Քրիստոսի սիրուց։

Ամիրան ասաց. «Մահմեդական դարձի՛ր եւ ընդունի՛ր մեր օրենքները. ես քեզ կտամ մեծամեծ պարգևներ, գյուղեր, հարստություն, իշխանություններ, գանձեր եւ գեղեցիկ կանայք. եթե ոչ՝ ապա ծանր տանջանքների ենթարկելով՝ կսպանեմք»։

Սուրբը պատասխանեց. «Նզովյալ է Մուհամեդը, եւ սուտ են օրենքները նրա. իմ Քրիստոսին չեմ ուրանա, ձեր օրենքները եւ խոստումները չեմ ընդունում եւ ձեր սպառնալիքներից չեմ վախենում։ Արդ, ինչ-որ անելու եք, իսկույն արեք»։

Այն ժամանակ ամիրան բարկացավ եւ հրամայեց բորբոքված կրակի մեջ գցել։ Նա [սուրբ Սարուխանը] ուրախ սրտով մոտեցավ կրակին, խաչակնքեց եւ մոնելով հրի մեջ՝ ասաց. «Հո՛ւր կենդանի Քրիստոս, Զո սիրո հուրը, որ գցեցիք երկրի վրա, բորբոքի՛ր իմ մեջ» (ս. Ներսես Շնորհալի, «Հաւատով խոստովանիմ»)։ Այրվելով կրակի մեջ՝ օրհնաբանում եւ զովաբանում էր Աստծուն, որ իրեն սրբերի լույսի արժանի ծառանորդը դարձնի։

Իսկ անօրեններից մեկը, որ

գտնվում էր մոտակայքում, վերցնելով մի հաստ փայտ՝ ուժգին հարվածեց նրա գլխին. [սուրբը] ընկավ գետնին եւ հրի մեջ այրվելով՝ ավանդեց հոգին՝ առ Քրիստոս բարի խոստովանությամբ։

Այս պատահեց Բաղեշ քաղաքում Հայոց ՌՁ թվականին՝ Առաջավորաց պահքի օրերին՝ Հովնանի տոնին, ուրբաթ օրը, Մովսես Տաթեւացու կաթողիկոսության եւ նրա աշակերտի՝ Փիլիպոս ճգնազգյաց վարդապետի ժամանակ, որը երկու տարի հետո հաջորդեց նրան՝ [պաշտոնավարելով] ԻԴ տարի։ Վերջինս [Փիլիպոս վարդապետ Աղբակեցին] այս օրերին գտնվում էր Բաղեշ քաղաքում եւ ականատես եղավ այս իրողությանը։ Նրա հրամանով մնացած նշխարներն ամփոփեցին Սուրբ Սարգիս վկայարանի խորանի մոտ։ Բազում հրաշքներ են տեղի ունենում հիվանդների եւ բորոտների հետ։ Շատ անգամ գիշերային խավարում քահանաները տեսնում էին սրբի վրա ճառագող լույսը եւ փառք տալիս Քրիստոս Աստծուն։

Գրաբարից թարգմանությունը՝ Օլգա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «Հայոց նոր վկաները», Վաղարշապատ, 1902

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՐԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՅԻ (1763-1780)


Սկիզբը՝ թիվ 7-13

Պողոս պատրիարքի օրոք Երուսաղեմի վանքը շատ տաճարակեր ունեցավ: Ե-գիպտոսի բռնապետ Ալի բեկը 1770-ին հարձակվեց Պաղեստինի վրա, գրավեց ու ավերեց Գազան ու Ռամլեն, Նեղոսի վանքերը Գազան Երուսաղեմի, յոթամյա պաշարումից հետո գրավեց Յոպպեն՝ 1772 թվի փետրվարի 6-ին հաղթականորեն քաղաք մտնելով: Նա կողոպտեց քաղաքի վանքերը: Նրան մեծապես օգնեց Աքրայի բռնակալ Օմար-Դահա շեյխը, որն ասպատակում էր Պաղեստինի տարբեր կողմերում եւ իր օժանդակությունը բերեց Յոպպեի պաշարմանը: Այդ նույն ժամանակներում Ղանեստի ու Դանուբի ափերին շարունակվում էին ռուս-թուրքական պատերազմները, եւ անգամ կռիվներ եղան Միջերկրականում, ուր 1769 թվի սեպտեմբերին հայտնվել էր Նեայի գետաբերանից ժամանած ռուսական նավատորմը՝ սարսափ ազդելով թուրքերի վրա: Թուրքերի դեմ ապստամբեցին Պելոպոնեսը, Ատտիկեն, Թեսալիան ու Եպիրոսը՝ հենց ռուսական նավատորմը հայտնվեց: Շուտով հայտնվեց նաեւ ռուսական երկրորդ նավատորմը՝ ծովակալ Էլֆինսոնի ղեկավարությամբ: Արխիպելագի կղզիներում եւ ծովափնյա նավահանգիստներում մարտական գործողությունները տարիներ տեւեցին, որից մեծապես տուժեց ծովագնացությունը, եւ խափանվեցին Երուսաղեմի

ուխտավորությունները: Ծանր կացություն հաստատվեց: Մի կողմից՝ Երուսաղեմը նեղվում էր հրոսակներից, մյուս կողմից՝ գրկվել էր ուխտավորների բերած հասույթներից: Այդ խառնակ ժամանակներում՝ 1774 թվի հունվարի 21-ին, մահացավ սուլթան Մուսթաֆա Գ-ն, իսկ նրա եղբայրը՝ սուլթան Աբդուլ-Համիդ Ա-ն, մեծ դժվարությամբ այդ շփոթներին վերջ տվեց՝ 1774 թվի հուլիսի 21-ին կնքելով Զուլյուկ-Կայնարքի հաշտությունը, որով ռուսներին անցան Դրիմը, Բուլջակը, Կուպանը՝ Ադախի եւ շրջակա բերդերով, եւ ստիպված եղան ռուսներին թույլատրել ազատ ծովագնացություն օսմանյան բոլոր ջրերում: Օսմաններին հաջողվեց միայն ետ վերցնել Բեսարաբիան, Մոլդավիան, Վալախիան եւ ռուսների կողմից գրաված Արխիպելագի կղզիները: Մի պահ խաղաղություն տիրեց նաեւ Պաղեստինում, սակայն 1775 թվի մայիսի 10-ին՝ Երեւման խաչի օրը, տեղի ունեցավ եգիպտացի Աբու-Դահաբի արշավանքը: Նա Յոպպե էլ մտավ եւ շատ մարդ կոտորեց: Վանքերն ավերվեցին ու կողոպտվեցին: Միևնույն վարդապետը պատարագելիս գլխատվեց, տեսուչ վարդապետը, որը փորձել էր թաքնվել ջրհորում, տեղում սպանվեց, Յոպպեում նահատակվեցին վեց միաբան ու վեց ուխտավոր: Այս գույժը ցնցեց Պողոս պատրիարքին, որն իր մահկանացուն կնքեց մայիսի 18-ին՝ ընդամենը մի

քանի օր անց: Ահա այսպիսի դժոխակ օրեր ապրեց Երուսաղեմի միաբանությունը Պողոս պատրիարքի պաշտոնավարության շրջանում:

Կարեւոր իրադարձություններ եղան Վենետիկի Միսիթարյան միաբանությունում, որը պառակտվեց, իսկ հետո էլ երկու մասի բաժանվեց: Միսիթարյանները սովորաբար լուրջաբան են մատնում այդ պարագաները կամ քողարկում են դրանք եւ չեն սիրում բացատրություն տալ: Ներքին անհամաձայնություններն սկիզբ առան 1750 թվի ապրիլի 6-ից՝ այն օրից, երբ արքահայր ընտրվեց Ստեփանոս Մելքոնյանը: Անհաշտությունը գնալով սրվեց՝ կապված վանական կանոնադրության հետ: Աբբահորը մեղադրում էին Միսիթար Սեբաստացու սահմանած կարգերը փոփոխելու եւ իր նորամուծություններով դժգոհություն առաջ բերելու մեջ: Ցավոք, մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել: Իրականությունն այն էր, որ Միսիթարի կարգերը որոշակի հիմքի վրա դրված էին եւ արդյունք էին նրա անձնական հեղինակության: Մելքոնյանը 1765 թ. մի սահմանադրություն կազմեց եւ աշխատեց իր պաշտոնի հաստատման հետ դա էլ պապին վավերացնել տալ, չնայած չուներ միաբանության համաձայնությունը: Յոթ տարվա ընթացքում նա փորձում էր իր մտադրությունն իրականացնել, որից զայրացած ու ձանձրացած միաբանները 1772 թվի մայիսի 25-ին ժողով գումարեցին եւ Մելքոնյանից պահանջեցին ետ կանգնել այդ ձեռնարկից: Հաշտության չհասնելով՝ որոշում են նրան պաշտոնազրկել եւ նոր արքահայր ընտրել: Հայտնվելով ծանր կացության մեջ՝ Մելքոնյանը դիմում է լատին արքեպիսկոպոսի օգնությանն ու պաշտպանությանը, իսկ նրա միջոցով էլ Սբ Դազար է բերել տալիս վե-



Նետիկյան զինված ուժեր, որոնք վանքից բռնի հանում են իբրեւ թե ըմբոստների պարագլուխներ հայր Աստվածատուր Պապիկյանին ու հայր Մինաս Գասպարյանին, որոնք արտաքսվում են Վենետիկի հանրապետությունից: Դրանով պառակտման հիմքը դրվեց: Միաբաններից 13-ը պաշտպանեցին Մելքոնյանին, իսկ 19-ը հարեցին Պապիկյանին, սակայն վանքը մնաց Մելքոնյանի ձեռքում:

Պառակտման հիմնական պատճառը, անշուշտ, եթե չհաշվենք ներքին մասնավոր ու պատահական պարագաները, միաբանության ուղղության խնդիրն էր, որն ի վերջո բերեց այդ ծանր արդյունքին: Մի կողմից՝ հռոմեադավանության հարցն էր, եւ մյուս կողմից՝ հայության նկատմամբ պահվելիք կերպը: Միսիթարը, հռոմեադավանությանը հարելով հանդերձ, հայասեր ուղղություն ուներ եւ մտադիր էր հռոմեականության մեջ փայլուն հայություն կազմել:

Շարունակությունը՝ էջ 5



Սկիզբը՝ թիվ 13

Աստված նկատեց եւ գնահատեց Դանիել մարգարեի խոսքը: Դա է վկայում նաեւ Թզուխը. պահքի ընթացքում մարգարեն, հագնելով քուրճ եւ գլխին մոխիր լցնելով, սկսում է աղոթել՝ Երեմիայի գրքից մի հատված (Երեմ. ԻԵ 11-12) ընթերցելով: Ապա խոստովանում է իր եւ հրեա ազգի գործած մեղքերը, ներում հայցում. «Ո՛վ Տեր Աստված մեծ եւ սքանչելագործ, որ պահում ես Զո սիրելիների ուխտն ու ողորմությունը, որոնք պահում ես Զո պատվիրանները: Մեղք գործեցինք, անօրինացանք, անիրավություն արեցինք, ապստամբեցինք ու շեղվեցինք Զո պատվիրաններից եւ Զո օրենքներից, չլսեցինք Զո ծառաներին՝ մարգարեներին, որոնք Զո անունով խոսեցին մեր թագավորների, մեր իշխանների, մեր հայրերի եւ երկրի ամբողջ ժողովրդի հետ: Զոնն է, Տե՛ր, արդարությունը, եւ մերն է ամոթն այսօր մեր երեսին...» (Դան. Թ 4-7): Իսկ 17-19-րդ հարյուրներում մարգարեն խնդրում է փրկել հրեաներին եւ փոխել իրավիճակը. «Արդ, Տե՛ր Աստված մեր, լսի՛ր Զո ծառայի աղոթքներն ու խնդրանքները եւ ցույց տուր Զո երեսը՝ հանուն Զեզ, այն սրբարարի մեջ, որ ավերվեց: Խոնարհեցրու՛, Աստված իմ, Զո աշխարհը եւ լսի՛ր ինձ. բա՛ց Զո աչ-

քերը եւ տե՛ս ապականությունը մեր եւ Զո քաղաքի, որի վրա դրված է Զո անունը, որովհետեւ մեր արդարության պատճառով չէ, որ գուր ենք հայցում Զեզնից, այլ՝ Զո անբավ գթության պատճառով. Տե՛ր: Լսի՛ր, Տե՛ր, Ների՛ր, Տե՛ր, ունկնդրի՛ր, Տե՛ր, եւ մի՛ հապաղիր՝ հանուն Զեզ, Աստված իմ, քանզի Զո անունով է կոչվում Զո քաղաքը»: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ Դանիել մարգարեն ապաշխարում էր, չնայած որ Տիրոջ համար երեք արդար անձանցից մեկն էր, ներում էր հայցում ազգի գործած հանցանքների համար, խնդրում Աստծո գթասրտությունն ու ողորմածությունը, Նրա ներկայությունը եւ ապավինությունը: Եվ մինչ նա խոստովանում եւ ապաշխարում էր, Գաբրիել հրեշտակը հայտնում է Աստծո պատասխանը. «Եվ մինչ ես խոսում էի ու աղոթում, խոստովանում էի իմ մեղքերը եւ գուր էի հայցում իմ Տեր Աստծուց սուրբ լեռան համար, մինչ ես խոսում էի աղոթքով, ահա Գաբրիելը, մի մարդ, որին տեսել էի Նախորդ տեսիլքում, թռավ եւ մոտեցավ ինձ՝ երեկոյան գոհաբերության ժամին...» (Դան. Թ 20-21): Եվ մարգարեն լսում է այն, ինչ կցանկանար լսել յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ. «Զո աղոթքի սկզբից մի պատգամ տր-

ՄԱՐԳԱՐԵԻ ԱՂՈԹՔԸ

վեց, եւ ես եկա այն հայտնելու քեզ, քանի որ դու սիրելի մարդ ես» (Դան. 23): Տիրոջ համար որքան ընդունելի է խոսարհությունը, նույնքան ատելի է պատժելի եւ հպարտությունը. «Իսկ ամբոխն աղաղակում էր. «Աստված է, որ խոսում է, եւ ոչ թե՛ մարդ»: Եվ անմիջապես հրեշտակը հարվածեց նրան, որովհետեւ Աստծուն փառք չտվեց. եւ որդերի կեր դառնալով՝ մեռավ» (Գործք ԺԲ 22-23): Իսկ երբ Դանիել մարգարեն էր իր մեղքերին խոսարհաբար ներում հայցում, Աստված հրեշտակին ուղարկում է ասելու, որ սիրում է նրան, լսում աղոթքները: Նույն գրքի Ժ գլխում նկարագրվում է. «Եվ ահա նա, ձեռքը ձգելով դեպի ինձ, կանգնեցրեց ինձ ծնկներս եւ ձեռքս թաթերի վրա եւ ասաց ինձ. "Դանիել, ա՛յր սիրելի, հասկացիր խոսքերս, որ պիտի ասեմ քեզ եւ մնա՛ քո տեղում, որովհետեւ այժմ ես ուղարկված եմ քեզ մոտ"»:

Երբ նա այս բաներն էր ասում ինձ, ես դողալով ոտքի ելա: Նա ասաց ինձ. «Մի՛ վախեցիր, Դանիել, որովհետեւ այն օրվանից, որ դու սիրտդ բացեցիր՝ խելամուտ լինելու եւ վիշտը հայտնելու Աստծու առաջ, քո խոսքերը լսելի դարձան, եւ ես եկա քո խոսքերի պատճառով...» (Դան. Ժ 10-12):

Դանիել մարգարեն սեփական ցանկությունների եւ երազանքների իրականացում չէր խնդրում, այլ իր աղոթքներում մշտապես փնտրում էր Տիրոջ կամքը: Այսպիսի բարեպաշտությամբ եւ խոսարհությամբ էր օժտված նաեւ Սողոմոնը. նա ընդամենն իմաստություն է խնդրում, իսկ Տերը տալիս է ավելին. «Եվ Տերն ասաց նրան. «Զանի որ դու այդ բանը խնդրեցիր Ինձնից, խնդրեցիր ոչ թե կյանքի երկար օ-

րեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ արգրվելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քեզ նմանը եղել եւ ո՛չ էլ քեզնից հետո քեզ նմանը կհայտնվի: Զեզ տալիս եմ նաեւ այն, ինչ դու խնդրեցիր՝ հարստություն ու փառք, այնպես որ քո ապրած կյանքի օրերին թագավորներից ոչ ոք չի լինելու քեզ նման: Եվ եթե ընթանա Իմ ճանապարհով, կատարես Իմ հրամաններն ու պատվիրանները, ինչպես ընթացել էր քո հայր Դավիթը, ապա քո կյանքի օրերը կերկրացնեմ» (Գ Թագ. Գ 11-14): Սողոմոնը չխնդրեց այն ամենը, ինչ սովորաբար մարդիկ խնդրում են՝ հարստություն, երկար կյանք, փառք, իշխանություն, հակառակորդների ձախողում, այլ փնտրեց Տիրոջ կամքն ու օգնությունը:

Դանիել մարգարեն եւս ոչ թե իր, այլ Տիրոջ կամքն էր փնտրում՝ մալով արդար եւ թույլ չտալով, որ վիրավորանքն ու վիշտը հաղթեն իրեն: Տերը սիրում է պահպանում էր նրան, լսում աղոթքները, հոգում կարիքները, չէ՞ որ նա ավելի լավ գիտի, թե ինչ է մեզ հարկավոր: Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «Դրա համար էլ ասում եմ ձեզ. հոգ մի՛ արեք ձեր հոգու համար, թե ինչ եք ունեւում, ոչ էլ մարմնի համար, թե ինչ եք հագնելու, որովհետեւ հոգին առավել է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հագուստը» (Դուկ. ԺԲ 22-23): Մարդն առանց Արարչի, Նրա ներկայության եւ օգնության անգործ է. «Զեզնից ո՛վ, հոգս անելով, կկարողանա իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել: Արդ, եթե փոքր բանի մեջ անկարող եք, այլ բաների հա-

մար ինչո՞ւ եք հոգս անում» (Դուկ. ԺԲ 25-26): Եվ իրապես, հոգու փրկության մասին մոռանալով՝ արժեքները եւ կարեւորում ենք անցողիկը, ունայնը. այս մասին Դուկասի Ավետարանում ասվում է. «...որովհետեւ այդ ամենն աշխարհի հեթանոսներն են, որ փնտրում են: Իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: Այլ դուք հետամո՛ւտ եղեք Աստծու արքայությանը, եւ այդ ամենն ավելիով կտրվի ձեզ» (ԺԲ 30-31): Մինչդեռ մենք՝ մահկանացուներս, մոռանալով մեր անգործ մեղանշական լինելը, ամենայնիվ Արարչից համառորեն ակնկալում ենք առօրեական ունայն ցանկությունների իրականացում՝ նույնիսկ չմտածելով մեր անցած ուղու, վարքագծի, Աստծո նկատմամբ ունեցած հավատի եւ հնազանդության, մեր աղոթքների բովանդակության մասին: Մշտապես հիշենք Աստծո Որդու խոսքերը. «Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակն Ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թե Իմ կամքը, այլ Զոնը թող լինի» (Դուկ. ԻԲ 42): Որքան շատ փնտրենք երկրային վայելքներ, ձգտենք հարստության (ի վերջո հարուստն էլ կարող է նույնքան դժբախտ լինել, որքան աղքատը), փառքի, իշխանության, այնքան կհեռանանք Աստծուց:

Որոշ աղոթքներ, կախված բովանդակությունից, կարող են ուղղակիորեն պատնեշ դառնալ Տիրոջ հետ հարաբերությունների ճանապարհին, մինչդեռ խոսարհությունն ու հնազանդությունը քանդում են բոլոր պատնեշները: Արարչի կատարելության եւ գործության համեմատ մեր մեղավոր եւ չնչին լինելու գիտակցումն է թույլ տալիս լսել Նրա խոսքը եւ կյանքի խավարում աստվածաշին լույսը գտնել:

Արփինե ՉԱՆԹԻՎՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՁԱԿ Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-13

Բոլոր կապանքներից ազատագրվել փորձող, իր հայրենիքի մոտիկ անցյալի՝ 1915-ի ողբերգության հետեւանքների մեջ իր անելիքը ճշտել ջանացող, ժամանակակից մարդու կյանքի ու խոհերի մի բազմաշերտ ներհյուսումն է «Կրակե շապիկը»: Վեպի առանցքը սա է. լրանում է տոհմի գերդաստանի՝ Նունե մայրիկի հոբելյանը, եւ նրա որդին ցանկանում է այդ առիթով մի սեղանի շուրջ հավաքել ամբողջ գերդաստանին: Բայց դա այնքան էլ հեշտ չէ, քանի որ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով տոհմը ցրվել է մի քանի աշխարհամասերում, բազմաթիվ քաղաքներում՝ գրեթե անհնար դարձնելով նրա համախմբումը: Այս առիթով զարգանում են դիպաշարային մի քանի գծեր, որոնցից գլխավորը Վարուժան Շիրակյանի կյանքի եւ դատողությունների ընթացքն է: Նա գրող է եւ վիպական գործողությունների մեջ ապրում է իր կյանքի ճգնաժամը՝ ճգնաժամ ստեղծագործական կյանքում, ընտանեկան, ընկերային եւ ազգակցական հարաբերությունների մեջ: Պետրոսյանը փորձել է ստեղծել համադրական վեպ՝ զուգակցելով հայ ժողովրդի տարբեր հատվածների շուրջ ունեցած դիտարկումները՝ նկատի ունենալով թե՛ հայրենիքը, թե՛ սփյուռքի գաղթօջախները, զուգակցե-


լով նույն գերդաստանից սերված մարդկային տարբեր նկարագրեր ու բնավորություններ, ի վերջո, ի մի բերելով միեւնույն անհատի մեջ ապրող հոգեբանական տարբեր շերտեր: Վեպի գաղափարական մտահղացումն ինքնին հետաքրքրական է, բայց գրական առումով լիարժեք մարմնավորում չի ստանում՝ կապված որոշ կերպարների սխեմատիկ պարզունակության, հայրենիքի ու սփյուռքի շուրջ ունեցած դատողությունների եւ պատմական փաստերի որոշ մակերեսային մեկնաբանության հետ:

Ժամանակակից կյանքին եւ նվիրված նաեւ **2. Խալափյանի** «Յեղեղ» (1963), «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» (1966), «Մեռնող հառնող», «Պատը», «Ոսկե միջինը» (1975), «Եվ վերադարձնելով ձեր դիմանկարը» (1971-1987) եւ մի շարք այլ վեպեր ու վիպակներ:

Նրա առաջին՝ «Յեղեղ» վիպակում գյուղում կատարվող ջրանցքի շինարարության եւ սիրո առանցքի զուգակցումով ստեղծվում են գյուղական իրականության մեջ գործող մի քանի մտավորականների՝ գյուղի բժիշկի, ուսուցչի, շինարարության նպատակով գյուղ եկած ճարտարապետի ու նրա կնոջ կերպարները: Գյուղն այստեղ պայմանական միջավայր է, եւ հերոսների կապը գյուղի կյանքի հետ, եթե չասենք բացառված է, ապա աննկատելի է, որի հետեւանքով անլիարժեք ու թույլ են ստացվել նաեւ կերպարները:


Քաղաքի մարդու եւ գյուղի իրականության կապ ստեղծվեց նրա «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո» վեպում: Ընդգրկումով եւ կենսական բազմաշերտ նյութի պատկերման տեսակետից այս գործն առանձնահատուկ տեղ է գրավում Խալափյանի ստեղծագործության մեջ: Ընդգրկումն ամբողջ խորհրդային իրականությունն է՝ սկսած 1920-1930-ականներից մինչեւ պատերազմ եւ ետպատերազմյան երկու տասնամյակները: Ընդգրկման հարստությամբ ու տեսականությամբ պատկերվող նյութը հիմք է ծառայում վեպի գլխավոր հերոսի՝ քաղաքից գյուղ եկած բժիշկ Ստեփան Եսայանի գիտակցական կյանքի ամբողջ ընթացքը պատկերելու համար, որի կերպարի մեջ արտացոլվում են իրականության հանգուցային որոշ կողմեր: Եսայանն անվանի հեղափոխականի որդի էր, որն ավարտելով բժշկական ինստիտուտը եւ միայնակ մորը թողնելով Երեւանում՝ մեկնում է հեռավոր մի գյուղ ու այնտեղ անցկացնում իր ամբողջ կյանքը: Այդ ընթացքում նա մասնակցում է պատերազմին, բազմաթիվ տատանումներ ունենում գյուղից քաղաք վերադառնալու կապակցությամբ, բայց, ի վերջո, վերջնականապես կապվում է գյուղին եւ այնտեղ էլ կնքում իր մահկանացուն:

Նյութի ժամանակային լայն ընդգրկմամբ վեպում նկատելի տեղ է հատկացված նաեւ 1930-ական թթ. գյուղական կյանքին, պատերազմական ու ետպատերազմյան տարի-



ների դեպքերին եւ, ընդհանրապես, իրականության անցյալին ու ներկային: Ստեփան Եսայանը միայնակ մարդու կերպար է: Մայր ու որդի օտարանում են իրարից: Ստեփանն ամբողջ կյանքում չի ամուսնանում: Միայնությունը կեղեքում է նրան եւ աստիճանաբար կապում գյուղին: Քաղաքի հետ նրա կապերը թուլանում են: Եվ ծերության օրերին, երբ մի կերպ հաստատվում է քաղաքում ու հիվանդանոցներից մեկում աշխատանքի տեղավորվում գլխավոր բժիշկի տեղակալի պաշտոնով, Եսայան մեջ կուտակվող մեռության ցավից թողնում է քաղաքն ու շրջապատի անձանոթ մարդկանց եւ վերստին մեկնում գյուղ, որի հետ արդեն հարազատություն ուներ: Հարազատությունն ստեղծվում է մարդկանց հետ ձեւավորված հարաբերություններով:

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ էջ 2

Այնուհետեւ Զովորոդը հասնում է Վան եւ մեկ օր, երբ նա գրոսնում էր Վանին մերձակա մի գյուղում, նրա վրա երեք շուն է հարձակվում ու կծոտում նրա ոտքը: Վերքը սաստիկ արնահոսում էր: Անգլիացուն անսպասելի օգնության է հասնում մի հայ գյուղացի: Ահա թե ի՞նչ է գրում Զովորոդը. «Մի հայ գյուղացի վիրակապեց իմ վերքը, բայց սկզբում նա վնասվածքի վրա ալկոհոլ լցրեց՝ արյունահոսությունը դադարեցնելու համար, այնուհետեւ վերքի վրա ձեռք քսեց, ապա մեղրից, աղից, մեխակից եւ մեկերկու այլ բաղադրամասերից կազմված մի բալասան դրեց: Հայերն իրոք հմուտ բուժակներ են եւ կարողանում են զանազան վերքեր բուժել» (տե՛ս L. Hamalian, նշվ. աշխ., էջ 122):

Հայերի մասին իր տպավորությունն է հայտնել նաեւ անգլիացի Ջ. Ա. Քադոն իր «Բուրդ երգը» գրքում (Cuddon, J. A., The Owl's Watch Song, Barrie and Rockliff, London, 1960): Վերջինիս մեջ ասվում է, թե ինչպես է անգլիացին ընկերանում թռչանի անցած մի հայազգի դեղագործի հետ: Ահա թե ինչպես է օտարազգի գրողը ներկայացնում իր հայ ընկերոջը. «Իմ հայ ընկերը հրաշալի մարդ էր, բարեկիրթ եւ գվարճալի: Նա օժտված էր հին սերնդին հատուկ ազատ ու ազնվագարն շարժու-

ծելով: Նա խոսում էր մաքուր անգլերենով, ցածր ու մեղմ ձայնով: Հայազգի դեղագործը հմտացել էր անգլերենի մեջ, քանի որ տարիներ շարունակ թերթեր էր կարդում եւ անգլերեն խոսելու առիթը երբեք բաց չէր թողել: Ինձ համար չափազանց հաճելի էր լսել, թե ինչպես է այլազգի մեղք մաքուր ու պերճորեն խոսում իմ մայրենի լեզվով: Երբ ես նրան առաջին անգամ հանդիպեցի, նա պատմեց, որ ես մահու չափ ծանծաղեցի եմ».- այսպես խոսք բացեց նա եւ ապա հավելեց. «Ինչպես Նապոլեոնն Էլբայի վրա»: Ես բավականին հաճախ նրա հետ շախմատ էի խաղում: ...Նա սիրալիր հակառակորդ էր, անխռով ու քաղաքավարի եւ շատ լավ էր շախմատ խաղում (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 129):

Հավելենք, որ անգլիացի հեղինակին հետաքրքրել են ոչ միայն հայերի պահվածքն ու շարժումները, այլեւ նրանց հակումն արվեստի, մասնավորապես՝ ճարտարապետության նկատմամբ: Անգլիացին չափազանց հիացած է Ստամբուլում գտնվող եկեղեցիներով: Նա գրում է հետեւյալը. «Ճարտարապետների գլխավոր նվաճումն այն է, որ նրանք հայտնագործել են, թե ինչպես է պետք հավասարակշռել գմբեթը գմբեթատակ տարածության վրա: Այս հայտ-

Հայ ժողովրդի դատկերումը օտարազգի ճանադարհորդների եւ միսիոներների գրվածքներում

Նագործության հեղինակները հայ եւ հույն ճարտարապետներն են» (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 130): Անգլիացի հեղինակի դիտարկմամբ ճարտարապետները, ի դեմս Սուրբ Սոֆիայի տաճարի, մի կառույց են ստեղծել, որը ներդաշնակորեն լրացնում է քարոզի տեքստն ու գլխավոր մասը, իսկ խճանկարները պարզաբանում են քարոզի բովանդակությունը (տե՛ս Hamalian L., նշվ. աշխ., էջ 130): Ահա այսպիսի մեծ դրվատանքով է խոսում Քադոնը հայազգի ճարտարապետների վարպետության մասին, թեեւ հայերի ճարտարապետական տաղանդը նույնիսկ ապացուցման կարիք չունի, քանի որ հայերը, ինչպես լավ հայտնի է պատմությունից, դեռեւս վաղ միջնադարից հմուտ շինարար-վարպետներ էին: Նրանք բազմիցս զարմանք եւ հիացմունք են պատճառել օտարների՝ իրենց հրաշակերտ ճարտարապետական կոթողներով: Իսկ այժմ վերադառնանք սույն հոդվածի բուն թեմային, ավելի որոշակի՝ այն հարցին, թե ինչպես են օտարները պատկերել համիդյան ջարդերի ու Մեծ եղեռնի շրջանում ապրած հայերին: Ավելորդ չենք համարում նշել, որ օտարազգի հեղինակները, բնորոշելով հայոց կոտորածների շրջանում ապրած հայերին, նրանց հոգեբանությունն ու մտածելակերպը, հաճախ գերծ են մտնում միանշանակ ու ծայրահեղ կարծիքներ արտահայտելուց: Սա միանգամայն հասկանալի է, քանզի յուրաքանչյուր ազգ բաղկացած է բազմաթիվ անհատներից, որոնք օժտված են անկրկնելի անհատականությամբ. տարբեր են միեւնույն էթնոսին պատկանող մարդկանց աշխարհայացքն ու աշխարհընկալումը, կյանքի հան-

դեպ ունեցած մոտեցումները, նպատակներն ու ձգտումները: Այսպես օրինակ՝ եղեռնի շրջանում ապրած հայերի մի մասն ակտիվորեն ներգրավվել էր հասարակական-քաղաքական գործընթացների մեջ՝ նպատակ ունենալով ձեռքբազատել հայ-քրիստոնյային ճշվածի, հալածվածի եւ իրավազուրկի նսեմացուցիչ կարգավիճակից, այսպիսով վերականգնել նրա ազգային արժանապատվությունը: Այս առաքելությունը, անկասկած, բնավ էլ դյուրիններից չէր, սակայն հայության քաղաքականապես առավել ակտիվ ու հասուն զանգվածը լի էր վճռականությամբ եւ բնավ մտահոյի չէր հետ կանգնել իր հայրենասիրական ու ազգասիրական նպատակներից: Իսկ հայ ժողովրդի մյուս հատվածը գերադասում էր զբաղվել խաղաղ ստեղծարար աշխատանքով եւ գերծ մնալ «արկածախնդրությունից»: Ասել կուզի՝ հայությունն ինչպես պատմական անցյալում, այնպես էլ հայոց կոտորածների շրջանում պառակտված էր երկու գաղափարական ճամբարների, ինչը թերեւս հանդիսացել է ցավալի կորուստների ու ազգային ողբերգությունների հիմնական պատճառներից մեկը:

Այժմ փոքր-ինչ խոսենք վերջին հարյուր հիսուն տարիների ընթացքում ապրած հայերի իդեոլոգիան ու ձգտումների մասին: Օտարազգի հեղինակների հավաստիացմամբ հայ ազգը որոշակիորեն տարբեր էր մինչեւ XIX դ. երկրորդ կեսը եւ դրանից հետո: Մինչեւ նշված ժամանակաշրջանը հայ ժողովուրդը հիմնականում կազմված էր արհեստավարժ արհեստավորներից, ճարպիկ վաճառականներից եւ աշխատասեր գյուղացիներից, իսկ ուսյալ

մարդկանց թիվն այնքան էլ մեծ չի եղել: Սկսած XIX դ. երկրորդ կեսից՝ հայ երիտասարդներն իրենց հայացքներն ուղղում են դեպի Եվրոպա, քանի որ այստեղ էին կենտրոնացած այդ ժամանակաշրջանի լավագույն կրթօջախները: Վերջիններս առավել առաջադեմ հայ երիտասարդներին հրաշալի հնարավորություն ընձեռեցին հետ չմնալ ժամանակի պահանջներից ու հաղորդակից դառնալ համաշխարհային մշակույթի ու գիտության վերջին ձեռքբերումներին եւ նվաճումներին: Հենց XIX դ. երկրորդ կեսից սկսած՝ առաջացավ հայ մշակույթային եւ գիտական էլիտան, որը շատ լուրջ նվաճումների կարող էր հասնել, եթե չլիներ հայոց ցեղասպանությունը: Բայց որքան էլ մեծ էր եղեռնի հասցրած վնասը, միեւնույն է, հայությունը գերմարդկային լարումների շնորհիվ կարողացավ մոբիլիզացնել իր ուժերը եւ շարունակել իր հոգեւոր-մշակութային ու գաղափարական զարգացումը Ամերիկայի, Եվրոպայի, Մերձավոր ու Հեռավոր Արեւելքի եւ իհարկե Ռուսաստանի գաղթօջախներում: Հիշենք, թե մշակույթի ու գիտության ոլորտն ու շատ գործիչներ է տվել հայ Սփյուռքը: Սփյուռքում են ապրում եւ աշխատում բազմաթիվ տաղանդավոր հայ բժիշկներ, իրավաբաններ, գրողներ, երաժիշտներ, դերասաններ, նկարիչներ ու գիտնականներ, որոնք հիրավի բարձր են պահում հայ ազգի պատիվը եւ շարունակ ապացուցում են, որ հայ ժողովուրդն ինչպես նախկինում, այնպես էլ այժմ իր արժանի տեղն է գրավում համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԿՏՐԻՃՎՈՐԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ» ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սկիզբը՝ թիվ 12-13

Քննության առնվող գործի երկրորդ գլուխը կոչվում է «Յաղագս գոտոյ»։ Այստեղ պատմվում է այն մասին, թե միջնադարում ովքեր ինչ գոտի են ստացել, եւ ինչ խորհուրդ ունի գոտի տալը։ Գոտի ստացողը, գտարյուն քրիստոնյա լինելով, պարտավոր է նաեւ քաջատեղյակ լինել պատերազմական գործին։ Նա պիտի նվիրաբերի իր լինի թե՛ հարազատ Եկեղեցուն ու հավատին, թե՛ հայրենիքին ու սեփական ժողովրդին։ Որովհետեւ հավատն ու հայրենիքն օտարից պաշտպանելն էլ սուրբ գործ է։ Զորքեր գոտի ստացողը զինվորականն է, որն զբաղվում է պատերազմական գործով (տե՛ս նույն տեղում, էջ 235)։

Վերջին՝ «Վասն գաւտի տալոյն» գլխում խոսվում է այն արարողության մասին, որ մանկավարժը գոտի է տալիս մանուկին։ Գոտի ստացողը պարտավոր է հետեւել մանկավարժի տված 15 պատվիրաններին։ Դրանք երիտասարդին հորդորում են լինել ծնողասեր, խաղաղասեր, չսիրել զինին ու հարբեցողությունը, ամուսնանալ եւ սիրել իր կնոջը, չցանկանալ օտար կնոջ եւ այլն։ Այս խրատները տալուց հետո մանկավարժն իր որդեգրի մեջքին գոտի է կապում՝ ասելով. «Աստուած շնորհաւոր առնէ» եւ «ասես եղբարքն՝ Ամեն եւ եղիցի» (տե՛ս նույն տեղում, էջ 239)։



Այսպիսով՝ մանկավարժները, լինելով երիտասարդական միությունների ղեկավարներ, պարտավորված են եղել ոչ միայն մանկությունը հոգեւոր սնունդ տալ, այլեւ խաղաղ ժամանակներում առաջնորդել նրանց ստեղծարար աշխատանքի ճանապարհներով, իսկ երկրի համար օրհասական օրերին զինավառ ու քաջ մանուկներին արդար պատերազմի տանել ընդդէմ օտարի՝ ի պաշտպանություն հարազատ շենքերի ու քաղաքների։

Մանկավարժների մասին խոսելիս Է. Բաղդասարյանը պնդում է, որ ճիշտ չէ նրանց ուղղակիորեն կապել թե՛ Երզնկայի «Եղբայրության» եւ թե՛ հետագայում ստեղծված «Կտրիճվորաց Եղբայրությունների» հետ։ Նա բերում է փաստեր, որտեղ «մանկավարժ» ընկալվում է իբրեւ պաշտոն, ոչ թե հատուկ անուն, եւ ավելացնում է. «Ինչ վե-

րաբերում է 1280 թ. Երզնկայում կազմակերպված եղբայրությանը, ինչպես եւ ավելի ուշ հանդես եկած կտրիճվորաց միություններին, ապա, անկասկած, հայ ժողովրդի լայն զանգվածների մեջ խոր եւ մեծ հետք թողած մանկավարժությունը որոշակի ազդեցություն է ունեցել այդ կազմակերպությունների վրա, բայց առայսօր մեր ձեռքի տակ եղած բոլոր փաստերը հուշում են, որ վերջիններս զարգացած ավատատիրության արգասիք էին եւ հետապնդում էին ոչ միայն բարոյական ու տնտեսական շահեր, այլ նաեւ սոցիալ-քաղաքական նպատակներ, ինչպես այդ ճշտորեն նկատում են Լ. Խաչիկյանը եւ նրան հետեւող գիտնականները» (Է. Բաղդասարյան, 3. Երզնկացիք եւ նրա խրատական արձակը, էջ 72)։

Մենք, համաձայնելով այս տեսակետի հետ, ուզում ենք ուշադրություն հրավիրել Է. Բաղ-

դասարյանի այն խոսքին նաեւ, թե մանկավարժությունը սկիզբ է առնում վաղ ժամանակներից, եւ որ Եկեղեցին սկզբում փորձել է պայքարել այդ երեւոյթի դեմ։

Այս իրողությունը մեզ համոզում է, որ մանկավարժությունը նախաքրիստոնեական ծագում ունի։ Ինչ վերաբերում է կտրիճ եւ մանուկ կոչումներին, ապա կարելի տեղեկություններ ենք գտնում 10-րդ դարի Կաթողիկոս Անանիա Սոկացու մի թղթում (տե՛ս Արարատ, 1897, էջ 276)։ Այստեղ նա պատմում է Գրիգոր Նարեկացու հոր՝ Խոսրով Անձեւացու մասին, որին մեղադրում է աղանդավորության մեջ, եւ ավելացնում. «ՆԳ (954) թուականի... յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նման զվիճակն Անձեւացեացն յանկարծակի իբրեւ ի դիւանկան հոգւոցն շարժեալ... յառաջեաց բաջաղմունս անհեղեղս։ Զանգի հրամայէր միւնէւ մօրուս եկեալ զգլուխ խուզեալ մանկանց, թե այս արագաւ կոչի կտրիճ, եւ զգլի մօրուացն զհերսն, ապա թողուլ, երկայնիլ եւ մանիլ ցարուսս, զի այս արագաւ կոչեմ մանուկ...» (նույն տեղում, էջ 276)։

Ասատուր Մնացականյանը Ա. Սոկացու այս տեղեկությունից իրավացիորեն եզրակացնում է, որ «դրանք երիտասարդական հասակային դասերի կենցաղի երբեմնի արձագանքներն են, որ 10-րդ դարում օրի-

նականացման իրավունք էին պահանջում Խոսրով Անձեւացու միջոցով եւ հանդիպում ուժեղ դիմադրության։ Առավել ուշագրավն այստեղ երկու դասերի առկայությունն է. կտրիճները, որոնք ավելի փոքր են եղել (մինչեւ մորուք բուսնելը) եւ մանուկները (որոնց մորուքներն սկսել են երեւալ)։ Նրանց միմյանցից տարբերելու նպատակով կտրիճների մազերը սափրել են, իսկ մանուկներինը թողել են եւ հյուսել։ Հետագայում է, որ մանուկ ու կտրիճ հասկացությունների տարբերությունը վերացել է» (Ասատուր Մնացականյան, «Թուխ մանուկ» հուշարձանների մասին, թիվ 2, էջ 195)։

Միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցող երիտասարդական-հասակային դասերի մասին տեղեկություններ է տալիս նաեւ 13-րդ դարում ապրած Կոստանդին Բարձրբերդցի Կաթողիկոսը՝ իր «Խրատական թղթում»։ «Գ անգամ ժողով է ի տարին երեցն յեկեղեցին որի՞շ՝ զարս են զկանայս եւ զկուսան աղեկունս եւ զկուսան կտրիճներն եւ յարմար հասակացն եւ վարուցն խրատ տացէ, զի ամեն հասակի եւ վարուց բարուց խրատ որի՞շ է» (Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թղթը, առաքված Արեւելյան Հայաստան, 1251 թ., Բաւերք Մատենադարանի, թիվ 4, Եր., 1958, էջ 284)։

«Խրատական թղթը» նաեւ կարելի է արդյուր է 13-րդ դարում Հայաստանի քաղաքական վիճակի մասին։ Կաթողիկոսն այս «թղթով» դիմում է Արեւելյան Հայաստանի բնակչությանը, վերջիններիս մեղադրում է «ծանր մեղքերի» համար։

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՄԿՈՍՆԵՐ

ՄԻՍԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՃԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Մխիթարի այդ ուղղությունը, ծածուկ թե բացահայտ, Վենետիկում շարունակվեց՝ զարկ տալով հայկական հետազոտություններին։ Հարկ է նշել, որ Մեյքոնյանի հետ մնացին այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Վրթանես Ասկերյանը, Ստեփանոս Ազոնցը եւ Միքայել Չամչյանը։ Իսկ Պապիկյանին հետեւողները ոչ միայն չբարձրացրին հայկականությունը եւ լատինականության կողմը քաջալերեցին, այլեւ իրենց հռոմեականությունը տարան դեպի լատինամոլություն։ Ճիշտ է՝ հետագայում այդ ուղղությունը սրբազրկեց Կղեմես Մխիկյանի, Ղուկաս Տերտերյանի եւ Արսեն Այտնյանի ջանքերով։ Իսկ Մեյքոնյանի հետ մնացածներն իրենց հայասիրությունը համար անգամ ենթարկվեցին պապության խստություններին։ Նրանք էլ ավելի զարկ տվեցին իրենց գիտական հետազոտություններին։ 1789 թվին Աբ Ղազարում տպարան ստեղծվեց, որը մեծ առաջընթաց էր, քանի որ մինչ այդ միաբանների աշխատությունները հրատարակվում էին խալաթի տպագրիչների ձեռքով։ Բաժանումից հետո ազգային երկասիրություններով աչքի ընկան մի շարք միաբաններ, եւ 1772-ից հետո հանդես եկածների մեջ հայտնվեցին ազգային այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմեյանը, Հովհաննես Չոկրաբեյանը, Ղուկաս Ինճիճյանը, Սկրտիչ Ավգերյանը, Իգնատիոս Փափազյանը եւ Մանուել Ջախջախյանը, որոնք ձեռնարկվել են մինչեւ Մեյքոնյանի մահը, որ տեղի ունեցավ 1799 թվի հոկտեմբերի 4-ին։

Այդ հեռավոր ժամանակներում հայ հռոմեադավանները եւ հռոմեամետները դեռեւս ինքնուրույն կարգավիճակ չունեին

եւ հայկական պատրիարքարանին էին ենթարկվում, եւ դա էր պատճառը, որ կրոնական գործողություններն ու խորհուրդները, որ այդ կացության բնորոշ կողմերն էին եւ վիճակագրական հետեւանքներ ունեին, պարտավոր էին պատրիարքարանի պաշտոնյաների ձեռքից եւ պաշտոնական եկեղեցիների մեջ ընդունել։ Մասնավորապես դրանք էին՝ մկրտությունը, ամուսնությունը եւ թաղումը։ Լատին հոգեւորականներն ու քարոզիչները դա դիտում էին իբրեւ հերետիկոսների հետ հոգեւոր հաղորդակցություն եւ արգելում էին, իսկ անգամ ընդունված վճիռներն ապօրինի եւ անվավեր էին հռչակում։ Իսկ հայ հռոմեամետ ազգայինները քաղաքականապես պարտադրված դրություն մեջ էին, սակայն լատինների ու լատինամոլների թելադրանքների հանդեպ էլ խղճի խայթ էին գզում։ Ստիպված լինելով գնալ գաղտնի գործողությունների՝ նրանք դիմում էին լատին եկեղեցականներին, կամ էլ տներում ծեսերը ծածուկ էին կատարվում՝ հայ-հռոմեական հոգեւորականների ձեռքով։ Պետությունը, իհարկե, դա ապօրինի էր համարում եւ արգելքների ու խափանումների դիմում, որոնք հռոմեականների կողմից ստացել էին «կաթոլիկների դեմ հալածանք» անունը։ Վենետիկի Մխիթարյանները հատկապես այդ հանգամանքին ուշադրություն էին դարձնում՝ հետեւելով իրենց աբբահայր Մխիթարի ուղղությանը։ Նրանք աշխատում էին փաստել, որ պետք է ազատ թողնել հայ հռոմեականներին, որ կարողանան հայկական եկեղեցիներում հայադավան քահանաների ձեռքից այդ խորհուրդներն ընդունել։ Այդ մտադրությամբ նրանք հայտարարում էին, թե Հայոց Եկեղեցու դավանությունը չի



տարբերվում կաթոլիկականից կամ հռոմեականից, եւ որ հռոմեականության անհրաժեշտ բացատրություններն ընդամենը ոմանց անհատական կարծիքներն են եւ բոլորովին նշանակություն չունեն, եւ որ Հայոց Եկեղեցին իր ամբողջության մեջ Հռոմից պաշտոնապես անջատված չէ եւ ոչ էլ՝ դատապարտված։ Սրա գլխավոր նպատակը, ըստ էության, լատին քարոզիչների միջամտությանը վերջ տալն էր եւ բնիկ հայ կաթոլիկության ստեղծումը։

Աբ Ղազարից ռազմական ուժով արտաքսված երկու միաբաններն ապաստանեցին Տրիեստում, որը հին Տերգեստիա քաղաքն է։ Տրիեստը երկար ժամանակ գտնվում էր Վենետիկի հանրապետության կազմում, իսկ 1382 թվին անցել էր Ավստրիական կայսրությանը (իմա՝ Գերմանական կայսրությանը), որի գահակալը մեզ հետաքրքրող ժամանակներում Մաքիա-Թերեզիա կայսրուհին էր։ Նա իշխանությունը ժառանգել էր հորից՝ Կառլ 2-ից, եւ գործերի հիմնական ղեկավարն էր, չնայած միաժամանակ կայսր էր համարվում Կառլ Է-ն՝ 1742-1745 թթ.։ Դրանից հետո Թերեզիայի ամուսինը մինչեւ 1765 թ.

ձեւականորեն դիտվում էր որպես կայսր, իսկ նրանց հետո՝ որդին՝ Իոսիֆ Բ-ն կամ Յոզեֆ Բ-ն։

Պապիկյանը եւ նրան հարողները Տրիեստում հավաքվեցին առաջին անգամ 1773 թվի մայիսի 19-ին եւ որոշում կայացրին առանձին միաբանություն կազմելու մասին։ Նրանք դիմեցին կայսրուհուն, եւ վերջինս հավանություն տվեց՝ իր կայսրությունում հայկական միաբանություն հիմնելու։ 1775 թվի մայիսի 30-ին տրվեց կայսերական արտոնագիրը՝ զանազան առանձնաշնորհումներով։ Փաստորեն կայսրուհին իր երկրում ստեղծեց Մխիթարյանների երկրորդ միաբանությունը։ Տրիեստյան ճյուղը պարծենում էր, որ Մխիթարյան միաբանության անունն առաջինն ինքն է գործածել, չնայած մինչ այդ էլ այն Վենետիկում գործածվել էր՝ «յաշակերտություն Երմիաթարայ աբբայի» ձևով։ Սրանց նպատակը ոչ այնքան Վենետիկի Մխիթարյաններից անջատվելն էր, որքան թշնամությունը Մեյքոնյանի անձի դեմ։ Նրանք հույս ունեին, որ նրա մահից հետո իրենք կարող են միավորվել։ Ուստի այս ճյուղը եւս ուսման, տպագրության եւ քարոզչության ասպարեզներում լիովին հետեւում էր Մխիթարի ուղղությանը։ Իսկ քանի դեռ չէին միացել, նրանք յուրաքանչյուր երեք տարին մեկ վանահայր էին ընտրում այն դեպքում, երբ Վենետիկում աբբահոր պաշտոնը ցմահ էր։ Նյութական միջոցները, որ ստանում էին հռոմեական հայ մեծավորներից ու Գերմանական կայսրությունից, գնալով նվազեցին, կամեցան տիրել 1773 թվին լուծարված ճիզվիտների միաբանության ունեցվածքի մի մասին, սակայն պարտքերի տակ ընկան։ Մի պահ միատվեցին, եւ Վենետիկ վերադարձողներ էլ եղան, սակայն տրիեստյան ճյուղը պահպանվեց։ Դրանում մեծ էր Աստվածատուր Պապիկյան վարդապետի դերը, որը դիվանագիտական ճկուն վարք հանդես բերեց։

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
33 ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր հարցերին պատասխանում է

Կյուրեղ քահանա ՏՆՅԱՆԸ:

Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:



- Տե՛ր հայր, երջանկահիշատակ Գարեգին Ա հայրապետը անտարբերությունը դասում է յոթ մահացու մեղքերի շարքը՝ համարելով այն ութերորդը այս շարքում: Ինչո՞վ է անտարբերությունն այդքան վտանգավոր, որ մահացու մեղք է համարվում:

- Անտարբերությունը, իհարկե, ծայրաստիճան վտանգավոր մեղք է՝ մահացու ե՛լ անձի, ե՛լ հասարակության, ղեկավարության, պետության, ազգային ինքնության համար: Եկեք շատ պարզ բանից սկսենք: Տերը մեզ սովորեցնում է. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այնպես եւ դուք արեք նրանց» (Մատթ. Է 12): Սա ավետարանական Ոսկե կանոնն է: Յուրաքանչյուր մարդ կամենում է, որ իրեն լավ վերաբերվեն, օգնության ձեռք մեկնեն... Այստեղ կտրականապես մերժվում է անտարբերությունը: Հիշենք ավետարանական բարի սամարացու առակը, որն անտարբերության փայլուն օրինակ է (տե՛ս Ղուկ. Ժ 29-37): Վիրավոր, անպաշտպան, անօգնական մարդու կողքով

անցնում են քահանան, օրենսդետը եւ մի սամարացի, որին Իսրայելի ժողովուրդը բարեւ էլ չէր տալիս: Եվ ահա այդ սամարացին հոգաց վիրավորի մասին. նա Զրիստոսի օրինակն է: Մի՞թե Աստված անտարբեր է, չե՞ որ Նա ամեն բան անում է մարդու համար. կերակրում է, ջուր տալիս եւ ապրելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծում, հոգում է մարդու փրկության մասին, երբեմն հանդիմանում է, խրատում, պատժում մարդուն, որպեսզի վերջինս արթնանա եւ իր մեղսալից ընթացքը փոխի: Սիրո մեջ չի կարող անտարբերություն լինել, սերը պիտի գործնական լինի, քանի որ «հավատն առանց գործերի մեռած է» (Հակ. Բ 26): Նույնպես եւ սերն է մեռած առանց գործերի: Ինչպե՞ս կարող եմ խոսել սիրո մասին, երբ ես պատրաստ չեմ իմ ունեցվածքից, ժամանակից, հանգստից, վայելքից զոհաբերելու իմ մերձավորի

համար. այստեղ անձնական եւ սասիրությունից այն կողմ ոչինչ չկա: Սա է ծնում անտարբերությունը: Այսօր շատերն են մտածում. «Իմ ի՞նչ գործն է հարեւանիս վիճակը...»: Ինչպե՞ս կարելի է այդպես մտածել, չե՞ որ մենք Աստծով մեկ ենք, ազգով մեկ ենք:

- «Ով միայն իր համար է ապրում, նա մարդ չէ», - ասում է երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը: **Ընդհանրապես այսօր հասարակության բոլոր շերտերում է նկատվում այդ անտարբերությունը՝ անտարբերություն դիմացինի խնդրի, ցավի, վշտի կամ ուրախության հանդեպ: Ասացիք, որ սիրո պակասն է հանգեցնում անտարբերության: Մի՞թե այսօր սերն այդչափ պակասել է մեզանում:**

- Տարիներ շարունակ ես մկրտությունն չեմ անում առանց նախնական գրույցի եւ տեսնում եմ ժողովրդի վիճակը: Տեսնում

եմ երիտասարդների, որոնք մկրտված չեն, բայց իրենց քրիստոնյա են համարում: Շատերն էլ մկրտված են, բայց ոչ մի բանից տեղյակ չեն: Հարցնում եմ. «Մի՞թե ձեզ չի հետաքրքրում»: Պարզվում է, որ ոչ միայն չգիտեն, այլեւ չեն էլ ուզում իմանալ, քանի որ իրենց չի հետաքրքրում: Մի կիրթ կին մի անգամ ինձ ասաց. «Հնարավոր չե՞ առանց կարդալու քրիստոնյա լինել»: Ես հարցրի եւ իմացա, որ նա բժիշկ է: Եվ երբ ասացի, որ ես էլ բժիշկ եմ, բայց գաղափար չունեմ բժշկությունից, զարմացավ: Ասացի՝ ձեր ասածն եմ կրկնում՝ քրիստոնյա եմ, բայց գաղափար չունեմ քրիստոնեությունից: Այս անտարբերությունը բերել է նրան, որ այսօր մեր ժողովրդի «քրիստոնեությունը» մոմ վառելուց այն կողմ չի անցնում: Հասկանալի է, որ անասովածությունն յոթանասուն տարիներն իրենց ավերող գործել են մարդկային հոգիներում, բայց այսօր էլ մարդիկ չեն ուզում իմանալ: Անտարբերություն սեփական պատմության, ինքնության նկատմամբ: Այսօր ծնվող աղջիկների կեսը Էլեն, Մյուս կեսը՝ Միլենա անուններն են կրում: Սա ի՞նչ է նշանակում: Անտարբերությունը չարիք է ծնում, անտարբերությունը հնարավորություն է տալիս հանցագործին ավելի առաջանալ իր հանցագործ ճանապարհին, անտարբերությունը հնարավորություն է տալիս ինչ-որ մարդկանց ավերել մեր հուշարձանները, ճարտարապետական կոթողները: Անտարբերությունը դաշտ է ստեղծում ամենահոռի բարքերով առաջնորդող մարդկանց համար: Պատկերացնո՞ւմ եք՝ անտարբեր լինելից Ղարաբաղի հարցում: Ի՞նչ կլի-

ներ. հաղթանակ կլինե՞ր. իհարկե՞ ո՛չ: Անտարբեր մարդն արդեն ի սկզբանե պարտված է: Հավանաբար դա նկատի ունի երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսը, երբ ասում է, որ ով միայն իր համար է ապրում, նա մարդ չէ, մեռած է...

- Տե՛ր հայր, իսկապես ամենասարսափելի չարիքն ուրիշից ցավին, խնդրին, հասարակական այս կամ այն երեւոյթին չարձագանքելն է: Գուցե դա վախի մթնոլորտի կամ վիճակը փոխելու անկարողության հետեւա՞նք է: Ի՞նչ կասեք:

- Ինչ-որ ուժեր մեր ժողովրդի մեջ ներարկում են այդ բանը, ստիպում մտածել, որ միեւնոյն է, ոչինչ չի փոխվի, բայց ես հաճախ եմ հիշում ժողովրդական ասացվածքը. «Գեղ կանգնի, գերան կկոտրի»: Մարդն ասում է. «Գեղը չի կանգնում»: Բայց ինչո՞ւ սպասենք, որ «գեղը կանգնի». ինքներս սկսենք գործել: Ո՞նց կարելի է անտարբեր մնալ այն երեւոյթների կամ արարքների նկատմամբ, որոնք ուղղակի հիմքից քայքայում, խախտում են մեր պետությունը, խեղաթյուրում մեր պատմությունը: Սա իսկապես մահվան ճանապարհ է:

- **Անտարբերությունը չե՞ արդյոք պատճառը, որ հարուստն օգնության ձեռք չի մեկնում կարիքավորին, իրենից ցածր կանգնած մարդուն...**

- Եկեք չխոսենք միայն հարուստների մասին, որովհետեւ օգնությունը միայն նյութական բնույթ չի կրում: Իհարկե, կան հարուստներ, որոնք օգնում են աղքատներին, բայց դա ավելի շուտ ինքնագովազդի նպատակ ունի:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Ներկայացվում է Վասիլի ընտանիքը, որի տանն առաջին անգամ գյուղ մտնելիս իջեանել էր բժիշկը եւ որի տան էլ տասնամյակներ հետո ավարտում է կյանքը: Այդ ընտանիքի հետ ունեցած նրա նախնական կապերը հետագայում ուժեղանում են պատերազմական տարիների մի իրողությամբ: Պատերազմի դաշտում Վասիլի տղաներից մեկը՝ Գուրգենը, հանդիպում է բժշկին եւ խնդրում իրեն ծառայությունից ազատել եւ տուն ուղարկել: Սակայն բժիշկ Եսայանն իր դիրքը չի չարաշահում: Գուրգենը մեռնում է պատերազմի դաշտում, իսկ նրա եւ Եսայանի միջեւ եղած միջադեպը հասնում է գյուղ՝ հորը, կնոջը՝ Անտիկին, եւ նրա երեք երեխաներին: Պատերազմից հետո, ընտանիքի որբությունը տեսնելով, Եսայանը խղճի խայթ է գզում եւ ամեն կերպ՝ նյութապես ու բարոյապես ջանում օգնել նրանց: Գուրգենի կնոջ հետ աստիճանաբար հոգեկան կապ է ձեւավորվում, որի համար, սակայն, օրերից մի օր Գուրգենի որդին՝ Արտուշը, մահացու վիրավորում է բժշկին: Այդ դեպքից հետո է, որ Եսայանը, անկարող լինելով մնալ գյուղում, ցանկանում է վերադառնալ քաղաք: Այս անգամ քաղաքի դռները փակվում են նրա առաջ, նա ստիպված վերադառնում է գյուղ: Իսկ ավելի ուշ, երբ քաղաքի դռները բացվում են նրա դիմաց, նա ինքն է կամովին վերադառնում գյուղ եւ մեռնում Անտիկի աչքի առաջ:

Խալափյանի նշված մյուս գործերում առավել կարեւորություն է ստանում նոր սերնդի հոգեբանական, բարոյական հիմքերի վերլուծությունը: Այդ ստեղծագործություններում պատկերվում են այնպիսի հերոսներ, որոնք գտնվում են որոնումների եւ ձգտումների իրականացման ճանապարհին, գործում են դեռեւս չկայունացած վիճակների մեջ: Մի կողմից՝ սեր, երագանք, կատարելության ձգտում, հրապույրներ, հաճույքներ, մեռության կեղեքող վայրկյաններ, թախիծ, ձանձրույթ, մյուս կողմից՝ հանրային հարաբերություններ, նոր սերնդի նոր մտածելակերպ ու գործելու ձեւ, հին սերնդի կողքին սեփական դիրքի ճշտում, հանրային մշակված օրենքներին սեփական նախասիրությունների հարմարեցում:

«Պատը» վիպակում սիրո մի պատմությամբ ներկայացվում է մերօրյա կյանքի մի դրվագ՝ ծանոթ միջավայրով բակ, իրար կապված հարեւաններ եւ մեջտեղում՝ սիրող մի զույգ, որին թվում է, թե ոչինչ չի խանգարում միասին լինելու համար, բայց որը, ի վերջո, չի հասնում իր նպատակին: Սերը չի մեռնում, բայց մաշվում է օրերի մեջ, հասարականում ու արժեզրկվում: Այս նորօրյա սիրո մեջ կան ե՛լ ազնիվ զգացմունքներ, ե՛լ շինծու անտարբերություն՝ ձեռքից թռչող սիրո հանդեպ Ներքին բուռն տազանայների բացակայություն, ե՛լ հոգեկան հզոր կրքերի վերացում: Չգացմունքի լրիվ ապրման



պակասն էլ հերոսներին ստիպում է տեղի տալ կյանքի թեթեւ հարվածներին, չցավել հոգեկան արժեքների կորստի համար եւ տանուլ տալ ամենաթանկն ու նվիրականը:

Այս կարգի հերոսների կերպարներն այլ նկարագիր ունեն «Եվ վերադարձնելով ձեր դիմանկարը» վիպակում, որն աչքի է ընկնում կյանքի «բաց» պատկերմամբ: Ամեն ինչ դիտվում է այնպես, ինչպես կա՝ մերկ, առանց գունազարդումների, առանց մարդկանց հարաբերությունների մեջ բնակալած մակերեսային ու էժանագին խաղերի:

Կյանքի ընդգրկման ժամանակահատվածը երկար է՝ ուսանողական տարիներից մինչեւ աշխատանք, ամուսնություն, ընտանիք: Հիմնական իմաստը, որ

զարգացվում է՝ ուսանողական շրջանում սիրո, հետաքրքրությունների փնտրտուքն է, փնտրտուքին հաջորդում է կյանքի վիճակների, հարաբերությունների կայունացումը՝ աշխատանք, ընտանիք: Իսկ հետո սկսվում է կարուսելը՝ ամեն ինչ սկսում է ամեն օր նույնությամբ կրկնվել, ձանձրույթը գրոհում ու ծանր նստում է մարդկանց երագանքների ու չիրականացված բոլոր ձգտումների վրա: Մարդիկ ներանձնանում են, փորձում ճշտել իրենց կյանքի իմաստը. «Այս ո՞վ է իմ մեջ անընդհատ փնտրում ինչ-որ մեկին», - հերոսներից մեկի՝ Արփեհիկի մեջ հասունացած այս հոգեվերլուծական հարցադրումն ամբողջությամբ կարող է վերաբերել վիպակի ամեն մի գործող անձի, որոնք փորձում են ճիշտ գույների մեջ տեսնել իրենց դիմանկարը:

Խալափյանի ստեղծագործության մեջ պայմանականության գեղարվեստական հնարանքի կիրառությամբ առանձին տեղ ունի «Ոսկե միջինը» վիպակը, որի մեջ պատկերված է բանտապետի եւ կալանավորի հարաբերություն ընդգրկող հոգեբանական վիճակ: Այդ վիճակի վերլուծությամբ հեղինակը զարգացնում է կենսափիլիսոփայական հետաքրքրական մտքեր: Կալանավոր եւ բանտապետ՝ ազատագրված եւ ազատագրող, երկու զուգահեռ գծեր, որոնք երբեք չեն հատվում: Թվում է, թե սրանք կյանքի ծայրաբեւեռներն են, սակայն այս երկու բեւեռներն այնպիսի հարաբերության մեջ են, որ կալանավորն ու բանտապետը՝ ազատագրվածն ու ազատագրողը, ներկայանում են որպես միեւնոյն ճակատագրի կրողներ: Կալանավորին պետք է հսկել, պետք է կանգնել նրա կողքին, որ չփախչի, ուրեմն հսկողը եւս նրա կողքին կորցնում է իր ազատությունը: Այս ամենը ներկայացվում է որոշակի իրադրությունների ու գործողությունների մեջ: Խալափյանն անում է նաեւ այլ կարգի հոգեբանական թափանցումներ: Նախկին կալանավորը դառնում է հսկիչ եւ փախուստի պահին սպանում նրան, ում հետ որոշել էին փախչել: Մարդու հոգեբանական փոփոխությունը պայմանավորված է ապրած վիճակների փոփոխությամբ. այդ վիճակների անցումների մեջ էլ Խալափյանը ներկայացնում է իր հերոսների հոգեբանական փոփոխությունը:

Շարունակելի

Ղափի ԳԱՍՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Բաբ աշ-Շամմասիա թաղամասում Մուհիզը աղ-Դաուլեան Աբու-Լ-Հուսայն Ահմադ իբն Բուվայխն իր համար պալատ կառուցեց՝ հրաշալի ձևանոցով, իսկ դրա պատերից մեկի երկայնքով՝ Տիգրիսի ափին՝ ձիարշավարան, որ փռված էր պալատի ետ գետափնյա այգու միջև։ Այնտեղ հետո բնակվեց Աբու Ջաֆար Մուհամմադ իբն Եսայա իբն Շիր-զադը։ Ավելի ուշ Աբու Ջաֆար աս-Սամարին արշավարանն այգի դարձրեց, իսկ այժմ այդ ամենը Մուհիզը աղ-Դաուլեայի պալատի սահմաններում են։ Նա սկսեց այն բանից, որ պալատը շրջապատող պարիսպ կառուցեց աշ-Շամմասիի վերջից մինչև մարգարաշտը։ Այդ պատեն շի երկայնքով 1500 արմունկ էր, իսկ լայնքով՝ 70-ից ավելի։ Դա կառուցեցին մեծ արդուներով, իսկ ներսից հենասյուներ կային։

Այդ շինարարական աշխատանքներն ընթանում էին անընդհատ, իսկ շինարարներին բաժանել էին մի քանի խմբի։ Մուհիզը աղ-Դաուլեան դա արեց այն բանից հետո, երբ հողացավ մայրաքաղաք կառուցել, որ նախ կամենում էր հիմնադրել Կավազիում, հետո վճռեց քաղաքն այնտեղ կառուցել, բայց ի վերջո պալատը կանգնեցրեց Բաբ աշ-Շամմասի թաղամասում։ Դա լինելու էր այնպիսի շինություն, որ փոխարիներ մայրաքաղաքին ել պակաս ծախսումներ պահանջեր։

Այդ աշխատանքների արժեքը նախապես բազմամիլիոն դրոհեմ էր հաշվվում, բայց հետո նկատելիորեն գերազանցեց բոլոր հաշվարկները։

Մուհիզը աղ-Դաուլեան պահանջեց, որ իր Աբու Մուհամմադ ալ-Մուհալլաբի վեզիրը դրա համար անհրաժեշտ դրամ հայթայթի, չնայած գանձարանում առանց այն էլ միջոցներ չկային հարկահավաքումից՝ առօրյա ծախսերի համար։ Ալ-Մուհալլաբին այդ հանձնարարությամբ շատ մտահոգ էր։ Բայց Մուհիզը աղ-Դաուլեան վեզիրին ու իր գրագիրներին ստիպում էր սկսել շինարարությունը։ Սակայն Մուհիզը աղ-Դաուլեայի պալատականներից մեկը հայտնեց, որ նրանք իր հրամանի կատարմանը շատ անփույթ են վերաբերվում՝ ձգտելով որքան հնարավոր է այդ գործն անել արագ եւ Եման, հետո մնացած դրամը յուրացնել։ Նա Մուհիզը աղ-Դաուլեային ցույց տվեց մի տեղ, ուր արդուները վատ էին ամրացված։ Երբ նա անցավ այդ տեղով, կողքով ընթացող Մուհիզը աղ-Դաուլեայի աչքի առաջ նրա ոտքերի տակից աղյուս ընկավ։ Մուհիզը աղ-Դաուլեան զայրացավ, թեպետ բնությամբ բարի էր, բայց շատ բռնկուն էր, իսկ երբ զայրույթը մարում էր, նա սովորաբար զոջում էր արածի համար, բայց ո՛վ կարող էր մեղմել նրա զայրույթը։ Նա կանչեց ալ-Մուհալլաբիին եւ ցույց տվեց նրան

ընկած աղյուսը։ Ալ-Մուհալլաբին աշխատեց արդարանալ, բայց Մուհիզը աղ-Դաուլեան զայրացած հրամայեց գետին տապալել նրան, գանահարել, ապա՝ խեղդել։ Ալ-Մուհալլաբիի պարանոցը թոկով կապեցին, եւ պարսպի վրա կանգնած ձիապանները բռնեցին պարանի ծայրից ու սկսեցին քաշել, եւ նա խեղդվում էր։

Երբ այդ իմացան զորականներն ու բարձրաստիճան թյուրքերը եւ պահազորը, շտապեցին Մուհիզը աղ-Դաուլեայի մոտ, նրա առջեւ համբուրեցին հողը եւ սկսեցին նրան խնդրել՝ գթալ ալ-Մուհալլաբիին։ Նրան իջեցրին, քանդեցին պարանը, եւ նա հագիվ կենդանի՝ վերադարձավ տուն։ Բայց նա ցույց չէր տալիս ծանր տեսք, որպեսզի իր թշնամիները, որ նրա անկումն էին տեսնում, չհարախնդային, որպեսզի լուրեր չտարածվեին այն մասին, թե նա ավարտուն մարդ է, քանի որ նրա տերը վտարել էր իրենից։ Նաեւ չէր ցանկանում, որ Մուհիզը աղ-Դաուլեային ասեին, թե նրանից ինքը քեն է պահել։ Որովհետեւ այդ ժամանակ անխուսափելի կլինեց դժբախտությունը։ Նա սովորույթ ուներ այդպիսի դեպքերից հետո խրախճանք կազմակերպել։ Կանչում էր երգիչների, հյուրերի՝ ցույց տալու, թե որքան քիչ է իրեն մտահոգում այդ ամենը, որ պատահում է իրեն։ Այս անգամ եւս, իրիկնադեմին տուն դառնալով, կերակուր



ուղեց, ընթերց ընկերների հետ։ Սարսափելի ցավից նա ուժասպառ էր եղել, այնուամենայնիվ դիմանում էր, զրուցում եւ խնդրեց գինի բերել։ Այնժամ ընկերները նրան ասացին. «Վեզիր, ավելի լավ է հանգստանաս, քնես, այժմ գինի խմելու ժամանակը չէ»։ Նրանք համոզում էին նրան, իսկ նա հանգստացնում եւ մխիթարում էր նրանց եւ արտասանեց այս տողերը.

Ուղղափառների առաջնորդը եւ իր գործերը նման են ճակատագրի, իսկ ճակատագրի շրջադարձից ամաչել չարժե...

Նա ըմպեց մի քանի գավաթ, ապա վեր ելավ։

Այս ամենն ինձ պատմվել է ալ-Մուհալլաբիի սեղանակիցներից

ից մեկի խոսքերից։ Վերջինը ներկա է եղել դիպվածին։

Չայրույթի մեջ Մուհիզը աղ-Դաուլեան սովոր էր մահապատժի հրաման տալու, բայց չէր ուզում, որ այդ հրամանը կատարվի, եւ սիրում էր, երբ իրենից ներքում էին խնդրում։ Դա հատկապես հաճախ էր լինում նրա մտերիների շրջանում։

Առաջին անգամ դա երեւաց, երբ Եմիրը հրամայեց մահապատժի ելքարկել ալ-Ախվազից մի մարդու, ուր այդ ժամանակ գտնվում էր Եմիրը։ Իբն Զարդամ ալ-Ախվազի անունով այդ մարդն ալ-Ախվազիի շուկայի դրամատան պետն էր, հատում էր անօգտագործելի դիւնարներ։

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ԿՏՐԻԺՎՈՐԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ» ԻԲՐԵՎ ԻՆՔՆԱԳԱՄԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սկիզբը՝ էջ 5

13-րդ դարի կեսերին Յայաստանը շարունակում էր մնալ մոնղոլական լծի տակ։ Ժողովրդի վիճակը գնալով ծանրանում էր պարտադրված հարկերից։ Յայ ավատատերերն ընդունեցին օտարի գերիշխանությունը եւ նրանց հետ սկսեցին նեղել ժողովրդին։

Ժողովուրդն այդ նեղությանը երկար դիմանալ չէր կարող, եւ երկրի տարբեր մասերում ապստամբություններ էին բռնկվում մոնղոլական տիրապետության դեմ։ Կոստանդին Բարձրբերդցին, սակայն, ժողովրդին հնազանդության կոչ է անում։ Նա հմուտ քաղաքական գործիչ էր եւ գիտակցում էր, որ անկազմակերպ ու անջատ-անջատ խռովություններով ժողովուրդը որեւէ հաջողության չի կարող հասնել։ Յայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Կիլիկիայի պետությունը ձգտում էր բարեկամական հարաբերությունների մեջ լինել մոնղոլների հետ, քանի որ իր դաշնակից եվրոպական երկրները ցանկանում էին նրանց քրիստոնյա դարձնել եւ նրանց ահռելի ռազմական ուժն օգտագործել Եգիպտոսի, Սիրիայի եւ Պաղեստինի դեմ ծրագրվող խաչակրաց արշավանքի ժամանակ (*Նույն տեղում, էջ 273*)։ Կարծում ենք՝ այս քաղաքական դրդապատճառներն էին, որ Կոստանդին Կաթողիկոսին ստիպում էին հնազանդության կոչ անել ժողովրդին։

Նա, լինելով հեռատես ու հմուտ պետական գործիչ, ցան-



կանում էր Եկեղեցու հսկողության տակ վերցնել այն շարժումներն ու գործողությունները, որոնք Յայոց պետության թուլացման ժամանակ կազմակերպվում էին ժողովրդի մեջ։ Այսպես էր մտածում նաեւ Հովհաննես Պլուզ Երզնկացին։ Պատահական չէ, որ նա էլ «եղբայրներին» կոչ էր անում հնազանդվել Եկեղեցուն, լինել խաղաղասեր, հարեւան ժողովուրդների հետ հաշտ ու խաղաղ գործակցել, ճանաչել նրանց մշակույթը. «Եւ խաղաղասեր լինին եղբարքս մեր ի մեջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին» մեծարիսցի եւ յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան» (*Լ. Խաչիկյան, 1280 թ., Երզնկայում... էջ 78*)։

Մեր այս երկու հայրենասեր այրերը գիտակցում էին, որ երկրի համար ծանր ու օրհասական պահերին պետք էր առավել զգույշ լինել, սխալ քայլեր չձեռնարկել, հակառակ դեպքում ե՛ւ ժողովուրդը, ե՛ւ երկիրը ծանր կորուստներ կարող էին կրել։ Անցյալի դառը փորձը միշտ ցույց է տվել, որ մեր երկրի դժբախտությունների ու անհաջողությունների պատճառը նաեւ անհեռատես քաղաքականություն վարելն է եղել։

Դեռեւս 5-րդ դարում Մովսես Խորենացին մեծ ցավով խոսում է մեր երկրի անմխիթար վիճակի մասին։ Յայրենիքը պահողն ու շենացնողը նրա զավակները պետք է լինեն, մինչդեռ մեր ուսուցիչները «տխմար ու ինքնահավան» են, կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ։ Չիսկորական-

ները՝ անարի, պարծենկոտ ու զենք ատող։ Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր։ «Դատավորները՝ տմարդի, ստախոս, խաբվող ու կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող։ Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած» (*Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Եր., 1968, էջ 319*)։

Պատմիչը ողբում է իր հայրենիքի ծանր վիճակը եւ դժբախտության պատճառը համարում է անմիաբանությունն ու կեղծիքը, անվստահությունն ու անտարբերությունը։ Առանց սիրո եւ միաբանության երկիրը դատապարտված է մասնատման ու ստրկացման։

Գրեթե ողջ միջնադարում Յայաստանին ուղեկցել են ներքին եւ արտաքին կործանարար վտանգները։ Եվ երկրի մասնատված հատվածներն իրենց փրկության հույսը կապում էին օտարների հետ եւ շատ դեպքերում հուսախաբ լինում։

13-րդ դարում Կիլիկիային եւս սպառնում էին օտար նվաճողների հարձակումները, իսկ պետությունը մեծ հույսեր էր կապում եվրոպացի խաչակիրների հետ։ Երկրում այնքան նկատելի էր արեւմտյան ազդեցությունը հագուստի, տարագի, զինվորական պաշտոնների, անգամ անվանումների վրա, որ հետագայում շատերին հիմք է տվել մտածելու, թե այնտեղ դեռեւս 12-րդ դարում եղել են ասպետական կազմակերպություններ։ Այս հարցով

զբաղվել է Դեռնոյ Ալիշանը։ Նա մանրամասն քննության է ենթարկել տարբեր աղբյուրներում կիլիկյան պետության մասին տեղեկությունները եւ նկատել. «Հնագույն գրիչը զասպետական կարգաց, ոչ յիշեն զհայկական ինչ առանձինն, բայց հեղինակը ոմանք ԺԵ եւ ԺԸ դարուց՝ ոչ գիտեմ յորոց աղբերաց առեալ, ասեն եւ Կարգ Յայ ասպետաց՝ հաստատեալ ի ժամանակի հաստատութեան Տաճարականացն, այլ գիտցայս հաստատութիւն եղեալ է յամի 1118 յերուսաղէմ, առ մերովս Ա Պարոն Թորոսիւ, թոռամբ Ռուբէնի մեծի, ոչ կարծեմ զայդ ստոյգ, բայց հաւանագոյն զոր ասեմ՝ ի թագաւորաց մերոց հաստատել։ Եւ ինձ սիրելի էր ասել ի Լեւոնի Ա թագաւորի։ Երկու դասք ասեն լինել ասպետացս հայոց, մի եկեղեցականաց, կամ քահանայից, եւ միւս՝ աշխարհականաց, երկոցուն եւս նպատակ գոյով՝ բանիւ եւ զինու պաշտպանել զուղղափառ հաւատս... եւ ասպետք ս. Վլասայ կոչէին, որ եւ այս ոչ թուի ինձ հաւանական» (*Դ. Ալիշան, «Սիւսուան», Վենետիկ, 1885, էջ 487*)։

Ալիշանը հավանական չի համարում 12-րդ դարասկզբին ասպետական միությունների գոյությունը։ Նա գտնում է, որ նման կազմակերպություններ հնարավոր է եղած լինեին Լեւոն 2-րդի թագավորության ժամանակ։ Դետագայում գիտնականներից ոմանք համաձայնում են Ալիշանի հետ, ոմանք էլ մերժում են այդ տեսակետը՝ բացառելով ասպետական ազգային միությունների գոյությունը Կիլիկիայում (*Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացիի Կիլիկիայի..., էջ 46*)։

Շարունակելի
Վարդան ԵՐԻՍՏՈՆՅԱՆ
Բանասիրական գիտ.
թեկնածու, դոցենտ

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԿ ՀՈՏԸ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր հարցերին պատասխանում է Կյուրեղ քահանա SULՅԱՆԸ:

Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Աննետա ԿԱԶԱՏՐՅԱՆԸ:

Սկիզբը՝ էջ 6

Օգնության, ողորմության տեսակ է նաեւ մերձավորին, ծանոթին, հիվանդին այցելելը, նրա կողքին լուռ նստելը, նրա ցավը, գանգատը լսելը, նրան մեկ ժպիտ նվիրելը, նրա համար աղոթելը, որքան էլ տհաճ կամ անընդունելի լինի տվյալ մարդը մեզ համար: Պատմում են, որ մի օր սուրբ Բ. Կեսարացին այցելում է մի քրիստոնյա մարդու, ում բարեպաշտության ու ողորմածության համբավը տարածված էր շատերի մեջ: Սուրբը լինում է նրա տանը, շրջում սենյակներում եւ տեսնելով մի փակ դուռ՝ պնդում է, որ այն էլ բացեն իր համար: Քրիստոնյան ստիպված ընդառաջում է սրբի խնդրանքին. դուռը բացվում է: Այնտեղ դրված մահճի մեջ պառկած է լինում մի այլանդակ, ժահահոտ մարդ, որի բերանից միայն լուտանքներ եւ հայիռյալներ են դուրս գալիս: Տան տերը տասներկու տարի բոլորից գաղտնի պահում էր այդ մարդուն: Եվ ի՞նչ է լինում այդ սրտացավության պտուղը. երկուսով ծնկում են եւ աղոթում այդ մարդու առողջացման համար, եւ նա բժշկվում է: Մենք ո՞ւմ պիտի նմանվենք. եթե ոչ մեր երկնավոր Տիրոջը, Ով ա-

սում է. «Գթասիրտ եղեք, ինչպես եւ ձեր երկնավոր Հայրն է գթասիրտ»: Ողորմածությունն անտարբերության հակառակն է: Տերն ասում է. «Զաղցած էի, եւ հնձ ուտելիք տվիք, ծարավ էի, եւ հնձ ջուր տվիք՝ խմելու, օտար էի, եւ հնձ ձեր մեջ առաք, մերկ էի, եւ հնձ հագցրիք, հիվանդ էի, եւ հնձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ հնձ այցի եկաք (Մատթ. ԻԵ 35-36): Այս աշխարհում պետք է օգնել յուրաքանչյուր մեկի, ով դրա կարիքն ունի: Ամեն մեկն ունի ողորմած լինելու հնարավորություն: Հիշենք աղքատ Դազարոսի եւ մեծահարուստի առակը Դուկասի Ավետարանից (ԺԶ 19-31): Մեծահարուստը դատապարտվեց դժոխքի կրակներին, քանի որ անտարբեր ու անուղորմ գտնվեց իր դռանը ընկած աղքատի հանդեպ, ում տեսնում էր ամեն օր եւ անտեսում էր նրան:

Օտարերկրացիները, որոնք աշխարհում ամենագեղեցիկ, ամենագարմանահիշատակ բաները տեսել են, գալիս են Հայաստան, այստեղ ուրիշ բան են տեսնում, սքանչանում են, մինչդեռ մենք այդ զգացողությունը կորցրել ենք: Սուրբ հող է մեր հողը...

- **Տե՛ր հայր, որքանո՞վ է մերօրյա մարդու՝ ինտերնետից կախ-**

վածությունը նպաստում կամ ավելի խորացնում անտարբերությունը, չե՞ որ այդ վիրտուալ կախվածությունը կտրում է մարդուն իրական կյանքից, առօրյա շփումներից, որի արդյունքում մարդը դառնում է անտարբեր իր շուրջը կատարվող ցանկացած երեւոյթի հանդեպ:

- Իհարկե՝ կարող է նպաստել, բայց եւ այդ երիտասարդներին ավելի քիչ եւ մեղադրում, քան ինքններս մեզ, որովհետեւ իրենց համար դա մի տեսակ փախուստ է ռեալ, անպետք աշխարհից, որը մենք՝ մեծերս, թողել ենք իրենց: Այսօր հասարակությունը տեղյակ էլ չէ, որ Ազգային ժողովն արդեն ընդունել է գենդերային հավասարության օրենքը, որն ընտանիքի ինստիտուտի վրա դրվող մի ակնակէ, քանի որ գենդերային հավասարության անվան տակ դուռ է բացվում հազար ու մի մերժելի երեւոյթների առաջ: Բայց եթե տեղյակ էլ լինեք, եւ չգիտեմ, թե ինչպես կարճազանքներ, գուցե նորից անտարբեր գտնվեք: Դա որեւէ ազգի, ժողովրդի կործանում է: Գիտենանք, որ ընտանիքը պետությունից կարելի է: Եթե ընտանիքի ինստիտուտը չկա, պետությունը պետություն չէ: Կլինի խառնաշփոթ, իսկ



քաոսի մեջ պետություն չի կարող լինել: Զառսը հակասում է Աստծուն:

- **Ի՞նչ լուծումներ եք տեսնում:**

- Պետք է հետաքրքրել մարդկանց, Աստծո խոսքը կենդանի, մատչելի կերպով հասցնել նրանց: Պետք է այդ սերմերը ցանկենք ու ջրենք. աճեցնողն Աստված է: Ցանկած սերմերն իզուր չեն անցնում, հավատացեք, որ Աստծո խոսքը ժայռեր փշրող «մուրճ» է (տե՛ս Երեմիա ԻԳ 29): Մի օր այդ մեռած վիճակում գտնվող սերմը կաճի, քանի որ Տերը կյանք է, ինչպես հնքն է ասում. «Ես եկա, որպեսզի կյանք ունենան եւ՝ առավել եւս ունենան» (Հովհ. Ժ 10): Անտարբերությունը մահ է, բայց եւ կարծում եմ, որ մի օր այս վիճակը կփոխվի:

- **Դուք լավատե՞ս եք այդ առումով:**

- Ես միշտ լավատեմ եմ: Աստված հրաշագործ է. նա ամենաաներեւակայելի հրաշքները կարող

է գործել: Աստված մեռած մարդուն հարություն է տալիս: Եթե մենք՝ որպես ազգ, ժողովուրդ, այսօր կիսամեռ վիճակում ենք, Աստված կարող է հարություն տալ, եթե միայն դեպի Իրեն դառնանք: Մեր բոլոր խնդիրների հիմնական պատճառն Աստծուց հեռանալն է: Եթե դառնանք Աստծուն, ապա ամեն ինչ կփոխվի: Հիշենք սուրբ Սահակ Պարթեւի տեսիլքը: Ես հավատում եմ, որ այդպես է լինելու, չգիտեմ՝ կտեսնե՞մ, թե՞ ոչ, բայց հավատում եմ, որ լավ է լինելու, որովհետեւ Քրիստոսից, Աստծուց հեռացած լինելով հանդերձ՝ այնուամենայնիվ քրիստոնյայի մեր տեսակը (չգիտակցված) ամենաշատը հայ մարդու մեջ է: Ես դրա վկայությունն ունեմ... Եվ ահա մեր այս տկարության մեջ Աստծո զորությունը կարող է ի հայտ գալ եւ գործել, ինչպես ասում է առաքյալը. «Երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կորնթ. ԺԲ 10):

ԱԹԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 7

Եմիրը չգիտեսալով՝ այդպիսի շատ դրամներ ուղարկեց Բասրա՝ դրանով ձի գնելու: Իսկ այնտեղ այդ ժամանակ փոստի պաշտոնյաներ կային, եւ դրամները չընդունվեցին, որովհետեւ լիարժեք չէին: Դրանք վերադարձրին, եւ հեծյալները, որոնց Եմիրն ուղարկել էր Բասրա, վերադարձան ու պատմեցին նրան այդ բանը: Եմիրը սարսափելի վրդովվեց, ուղարկեց իբն-Զարդամի ետեւից եւ նրա հետ գրուցելով՝ այնպիսի կատաղության հասավ, որ անմիջապես հրամայեց կախել նրան ալ-Խինդուվան ալ-Ախվազին կապող կամրջից: Այդ մարդուն տարան եւ կախեցին, եւ նա մահացավ: Հետո այն մարդը, որին Մուկզըզ ադ-Դաուլեան հրամայեց, որ կախի իբն-Զարդամին, վերադարձավ, ներկայացավ Եմիրին: Սա նրան հարցրեց՝ ինչ եղավ հանցագործը: Մարդը պատասխանեց, որ նրան կախեց, եւ մահացավ: Եմիրը խիստ զայրացավ եւ կշտամբեց այն մարդուն, նրա հետ նաեւ բոլոր ներկաներին՝ ասելով. «Մի՞թե ձեր մեջ չեղավ մեկը, որ խնդրեր ինձ ներել այդ մարդուց»: Հետո նա սկսեց հեկեկալ, որովհետեւ, ըստ Եուրթյան, արյունահեղությունը նրան սարսափեցնում էր: Մտերիմներն ասացին. «Մենք դա չգիտեինք եւ վախենում էինք քեզ չհնազանդվել»: Այնուհետեւ ամեն անգամ, երբ նա հրամայում էր որեւէ մեկին մահապատժի ենթարկել, նրան խնդրում էին գթալ դատապարտյալին եւ այդ խնդրանքը



բազմիցս կրկնում էին, մինչեւ նա փոխում էր իր վճիռը»:



Ահա թե ինչ պատմեց ինձ Աբու-Լ-Հասան Ահմադ իբն Յուսուֆ իբն Եակուբ աթ-Թանահին իր հոր պատմածից.

«Ես ալ-Մուվաֆֆաքի ճամբարում էի իմ տեր Բադրը ալ-Լա-նիսի հետ, որի գրագիրն էի: Վերջինս պատերազմում էր գինջերի գործակալի դեմ: (2հիշ - աֆրիկյան սեւամորթներ. արաբ եւ պարսիկ ստրկավաճառներն արեւելյան Աֆրիկայի ամբողջ ծովափից ստրուկներ էին տանում Չանգիբար կղզի եւ վաճառում: **Իրադարձությունները վերաբերում են 883 թ.:**

Չինջերից մեկը՝ Քիրթաս անունով, Դավաճանի մտերիմը,

ալ-Մուվաֆֆաքին նետահարեց՝ խփելով ուղիղ պտուկին եւ բացականչեց. «Ստացի՛ր Քիրթասից»: Այդ օրից սշված խոսքն ասացվածք էր դարձել աղեղնավորների համար: Երբ տապալված ալ-Մուվաֆֆաքին տարան մարտադաշտից, նա հազիվ էր շնչում: Նետը հանեցին վերջից, բայց նրա սլաքը մնաց մարմնի մեջ, այնպես որ վերքն սկսեց նեխել, եւ առաջացավ այտուց: Ալ-Մուվաֆֆաքը մահամերձ էր: Դա հայտնի դարձավ Դավաճանի զորականներին, եւ նրանք ամեն օր մեզ գոռում էին. «Աղ դրեք նրան», - ասես միւս է՝ ավելի երկար դիմանա: Բոլոր բժիշկներն ասում էին, որ պետք է հատել այտուցը, բայց ալ-Մուվաֆֆաքը թույլ չէր տալիս նրանց: Այնժամ նրանք ալ-Մուվաֆֆաքին ասացին,

որ եթե այտուցը բացվի, նեխումն իրանի խորքը կթափանցի եւ կսպանի նրան: Ալ-Մուվաֆֆաքը նրանց հորդորեց որեւէ խորամանկություն անել՝ խոստանալով նրանց պաշտպանել ալ-Մուվաֆֆաքի զայրույթից:

Եվ բժիշկներից մեկն աճեցրեց աչ ձեռքի եղունգը այնքան, որ դրա ետեւը կարելի էր թաքցնել դանակի բերանը եւ գալով ալ-Մուվաֆֆաքի մոտ՝ նրանից թույլտվություն խնդրեց շոշափելու նեխածը եւ նայելու՝ ինչ է կատարվում այնտեղ: Ալ-Մուվաֆֆաքը նրան ասաց. «Միգուցե ուզում ես կտրե՛լ այն»: Բայց բժիշկը ցույց տվեց իր ձեռքը, ասելով. «Ի՛նչպես կարող եմ ճեղքել քո այտուցը, եթե ձեռքիս դանակ չկա»: Այնժամ ալ-Մուվաֆֆաքը թույլ տվեց շոշափել, եւ բժիշկն արագ կտրեց այտուցը իր դանակով այնպես, որ նետասլաքն ընկավ, իսկ դրան հետեւեց շատ թարախ: Այդ անսպասելի վիրահատությունը նախ վախեցրեց ալ-Մուվաֆֆաքին, բայց երբ թարախից ազատվելը նրան թեթեւություն բերեց, եւ նա ուժերի հոսք զգաց, պարզեատրեց ու նվեր տվեց բժշկին, հետո թույլ տվեց բուժել իրեն, մինչեւ լիովին ապաքինվեց:

Աբու-Լ-Աբբասը նպատակադրվեց բռնել Քերթասին եւ ամեն անգամ, երբ մարտի դաշտում հանդիպում էր նրան, հարձակվում էր նրա վրա գերելու հույսով: Բայց Քերթասը կատաղի պաշտպանվում էր՝ միշտ կրկնելով բարբարոս արաբերենով. «Ա՛յ Բիլիբաս, - ուզում էր ասել Աբու-Լ-Աբբաս, - եթե քո ձեռքն ընկնեմ, ինձնից նետի համար ձգան պատրաստիր»: Ալ-Մուվաֆֆաքը շարունակում էր Քիրթասի որսը եւ ի վերջո նրան գերեց:

Վիրավոր Քիրթասին բերին ալ-Մուվաֆֆաքի մոտ, եւ նա հրամայեց զլխատել նրան: Բայց ալ-Մուվաֆֆաքը խնդրեց չսպանել, որովհետեւ ինքն էր ուզում Քիրթասի հաշվեհարդարը տեսնել: Ալ-Մուվաֆֆաքն արեց այնպես, ինչպես խնդրեց ալ-Մուվաֆֆաքից: Վերջինս գերուն տարավ, նրա երեք մատներին աղեղ պատրաստեց:

Ես հարցրի հորս՝ ալ-Մուվաֆֆաքին ինչպես արեց դա, եւ նա բացատրեց, որ նախ պոկեցին Քիրթասի եղունգները, հետո քերթեցին կաշին՝ սկսելով մատների ծայրերից՝ ուսով ու թիկունքով, նորից՝ մյուս կողմը. մարդկային մաշկն այնքան ամուր է, որ դա հնարավոր է: Իսկ հետո նա հրամայեց այդ կաշին ոլորել իբրեւ լար, որի միջոցով Քիրթասը մահացավ:

Շարունակելի
**Ուսերենից թարգմանեց
Արշակ ՄԱՂՈՅԱՆԸ**

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Վիճակը խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayan.wordpress.com

Ստոր. տպագր.

1.8.2013 թ.

Տպագրանկը՝ 2100

Գինը՝ 50 դրամ